

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԻՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՓՈՓՈՒՆ ՆՊԱՏԱԿ

Օրմանեան պատրիարքը սուլթանին անդեկազիր մը ներկայացնելով, չենք յիշեր քանի՛ հարուրդ, ինչորած է ինչ ինչ բարեկարգութիւններ — որոնց մէջ նաեւ «չարա- կարգութիւններ» ալ, օրինակ՝ պատրիարքարանին ծախ- քերուն կառավարական գանձարանէն հայթայթումը. մեր կրօնա-քաղաքական հաստատութիւնը թրքական պառիկ պաշտօնատան մը վերածելու անսխալական միջոց: Անց- նինք, Պահ մը ենթադրենք թէ այդ առաջարկները ընդու- նելութիւն գտնեն եւ գործադրուին, սակայն մեր առողջու- թեանը համար այդ պարմանները պիտի ունենան հիւանդի մը մարմինը ներմուծուած քանի մը կաթիլ վնասիւնի ազ- րեցութիւնը. խարուսիկ, րոպէական շնչատութենէ յետոյ ցաւերու վերսկսում, անելի խոշտանդիչ սաստիկութեամբ:

Հիմա՛, թիւրքիայէն Կուրս գտնուող թրքահայտակ հոյերն են որ կրնան ազգին վիճակը հիմնովին բարեփո- յելու պայմանները պահանջել եւ անոնց իրականացումին հետապնդել: Պրկուած պատրիարք մը, Դրան ծառայու- թեանը մէջ կողահար քանի մը ժողովականներ պէտք չէ համարձակին իրենց մանր մունր իղձերը իբր ազգը գոհա- ցնող վերջնական յայտարարութիւն ներկայացնելու յա- ւակնութիւնը ունենալ: Քսան տարի է հայ ազգը որոշ նը- պատակի մը կը ձգտի՝ Հայաստանի բարեկարգութիւնը եւրոպական վարչութեամբ. մեր բոլոր զոհողութիւնները — թէ՛ կամուտները եւ թէ՛ «յակամայից»ները, այդ նպատակին հասնելու համար ելած են: Հայոց պահան- ջումները քանի մը սնչուութիւններու մէջ սահմանափակե- լու իրաւունքը ո՛չ ոք ունի: Ո՛ր է ժողովուրդ, կուզէ մեծ ըլլայ կուզէ պզտիկ, ազատ թէ գերի, երբ առանց փոփո- խութեան միշտ կը դիմէ դէպի որոշ նպատակ մը, հոն կը ժամանէ՛, ուշ կամ կանուխ: Անյաջողութիւնը փոփոխա- մտութեան մէջ է: Քսան տարուան մեր ազգային ծրագրէն մագի չափ անգամ չենք կրնար հեռանալ: Եւրոպական վարչութեամբ Հայաստանի բարեկարգութեան ինչիբը երբ կը շարունակէ Եւրոպայի կարեւոր հարցերէն մէկը ըլլալ, ա՛ն ատենն է որ պիտի հրաժարինք մեր արդար պահան- ջումներէն:

Ո՛չ միայն հայերը այլ եւ օտմանեան կայսրութեան միւս բոլոր ցեղերը փրկելու միակ հնարաւորութիւնը եւ րոպական վարչութիւններու հաստատութիւնն է ապակիզ- րոնացումի զրուցեամբ. առանց այս պայմանին թիւրքիայ

բաժանումը անխուսափելի հարկ մըն է: Մինչեւ անգամ կթէ ամենալաւ արամադրութիւններով օժտուած ինչացի սուլթան մը գահակալէ, գարձեալ անկարելի է պետու- թիւնը միայն իսլամներու միջոցաւ բարեկարգել, ոչսինքն ապրեցնել: Շատոնց է որ այս ճշմարտութիւնը հասկցուած է. կէս գարէ ի վեր Պալիս գետպանական պաշտօն վարող անձնաւորութիւնները միշտ յայտարարած են թէ թիւր- քիոյ անկումը անխուսափելի է, վասն զի իսլամ ժողո- վուրդը բարոյապէս ապականեալ է: Բազմաթիւ վկայու- թիւններէն բաւական կը համարիմ՝ առաջ բերել ըստ Սթրէֆֆորտ ար Բէաքլիֆինը: Խրիմի պատերազմէն վեր- ջը Կ. Պոլսոյ բրիտանական համբաւուրը գետպանը, իբր իր փորձառութեան ամփոփ բանաձեւը, յայտարարած է.

«Կ. Պալիս պաշտօնիս ամբողջ անուշութեանը միշտ «նպատակս եղաւ արգինաւորապէս պաշտպանել անգլիա- «կան վաճառականութիւնը, ու միեւնոյն ատեն օտմանեան «կառավարութեան առաջնորդել եւ անոր դօրափոխ ըլլալ «գլխի հանելու համար այն գծուարին գործը զոր ա- «ռաջ կը տանի երկար տարիներէ ի վեր: Եղաւ ատեն մը «ուր պահ մը յաջողութիւն յուսացի, բայց այսօր կա- «րող եմ յայտարարել թէ հակառակ վեհապետին «(սուլթան Մէճիտ) բարի արամադրութիւններուն, հա- «կառակ տաղանդաւոր սակաւաթիւ պաշտօնեաներու «անձնուիրութեանը, յաջողութիւնը անկարելի է: Ազգին «ամբողջութիւնը էապէս ապականուած է: Յափշտակու- «թիւնը, գողութիւնը, կաշառակերութիւնը ընդհանուր է: «Նուազումը ամէն կողմէն երեւան կուգայ: Ինծի համար «հիւանդութիւնը ա՛լ անբուժելի է:»

Անգլիացի քաղաքագէտին նախատեսութիւնները հետ- զհետէ իրականացան տարիներու ընթացքին մէջ: Խրիմի պատերազմէն ետքը թիւրքիա Եւրոպայի թէ՛ քաղաքական եւ թէ՛ ելեմտական աջակցութիւնը լիովին վայելեց, ու իր զեկավարները համբաւուր պետական անձնաւորու- թիւններ եղան. սակայն ամէն օր դէպի անկում յառա- ջացաւ, վասն զի «ազգին ամբողջութիւնը էապէս ապա- կանուած է:»

Մարդ մը կայ որ ամենէն ազէկ ճանչցած է թիւրքիոյ այս ապականութիւնը, եւ համոզուած է որ փրկութիւնը ուղղամիտ քրիստոնեայ պաշտօնատարներէ միայն կրնայ գալ, եւ այդ մարդն ալ... սուլթան Համիտն է: Սուլթանը իր այս համոզումը գործնականապէս ցոյց տուաւ երբ իր անձնական հարստութեան փրկութիւնը վստահեցաւ ա- տած Հայերուն, վասն զի վրաէր թէ անոնք պարկեշտ են

եւ խելացի: Իր մասնաւոր շահերուն համար սուլթան Համիտ շատ իմաստուն գտնուեցաւ. կիրք, ատելութիւն, անձուկ մտածութիւններ ամենքն ալ ոտքին տակ առաւ, ու Յակոբները, Միքայէլները, Յովհաննէաները իր անձնական զանձուն նախարարները ըրաւ: Եթէ սուլթանը իր անձին պէս երկիրն ալ սիրելու ըլլար՝ տարակոյտ չի կայ թէ քրիտոստոնեայ կուսակալներ մինչեւ հիմա կամաց կամաց բարոյականութեան ճամբուն մէջ մտցուցած կ'ըլլային «էպպէս ապականուած ազգը», եւ զոնէ առ այժմ երկաբակեցութեան թուական մը ապահովուած կ'ըլլար թիւրքիոյ. սակայն սուլթան Համիտ եթէ ճարպիկ գիւնադէտ մըն է՝ բայց շատ խեղճուկ պետական անձնաւորութիւն մըն է, ուստի չէր կրնար այդ գաղափարը իրագործել, թէեւ անոր գործելիք հրաշքներուն համարուած ըլլար:

Պարագոնները սակայն աւելի բնաւոր հանգիստացան, ու քրիտոստոնեաները սատուհապէս ասող սուլթանին ալ պարտաւորեցաւ քրիստոնեաներու ոտքին ամէն օր մէյմէկ քիչ աւելի սեղ ընել երկիրն ընդհանուր վարչութեանը մէջ: Պէտք էր ապրիլ: Ելմտական նախարարութիւնը երբեմն յանձնուեցաւ Հայերու, եւ հիմա ալ եւրոպացի մըն է որ Մալիէն առաջնակարգ պաշտօն մը կը վարէ, իբր խորհրդական: Եւրոպացի մըն է նաեւ մաքսատան քիչ շատ կանոնաւորութիւնը ապահովողը, ինչպէս երբեմն ալ Հայ մըն էր: Կարգ մը տուրքերու գանձումը յանձնուած է Եւրոպացիներու որոնք կը մատակարարեն Հանրային Պարտքը: Երկրին բոլոր երկաթուղիները Եւրոպացիներու կը պատկանին. ու բանակն ալ իր կազմակերպութիւնը եւրոպացի սպաներու պարտական է: Այսպէս ահա սուլթան Համիտի գահակալութեան ի վեր եւրոպական վարչութիւնը կամաց կամաց կը հաստատուի թիւրքիոյ մէջ, եւ եթէ գիւնադիտութիւնը չուզէ, զոնէ ատենի մը համար, բաժան բաժան ընել օսմանեան կայսրութիւնը, եւրոպացի կուսակալներու եւ կառավարիչներու պաշտօնավարութեան հարկը անխուսափելի է:

Արդարեւ կը տեսնենք թէ ո՛չ մաքսատան հասոյթները զգալապէս կ'աւելնան, ո՛չ ելմտական պաշտօնատունը կարող է զրամ հայթայթել, ո՛չ Հանրային Պարտքի ազբերները աստատուել կը հոսին, ու եւրոպացի սպաներն ալ եթէ կրնան բանակը մարդել՝ բայց անկարող են զոյն պատերազմի դաշտը խրկել: Եւրոպացիները եղածը կրնան կանոնաւորել բայց անկարող են ձփայցնելու երկրին հարգաւթիւնը: Ըսուած է թէ «ելմտական բարեկալից վիճակ մը ապահովելու պայմանը խելացի քաղաքագիտութիւնն է»: Թիւրքիոյ համար խելացի քաղաքագիտութիւնը գիւնադիտութեան մէջ չի կայանար. Թիւրքիոյ պրոպագանդիստներու նախարարը Եւրոպա՛ն է. բարեկարգութիւն, ահա խելացի քաղաքականութիւնը որ կրնայ երկրին հասոյթները բազմապատկել: Եւ առանց ապակերտնացումի, առանց եւրոպական վարչութեան, անկարելի է բարեկարգութիւն ստցնել:

Խալաֆներն ալ պիտի պարտաւորին խոնարհիլ այս ճշմարտութեան առջեւ, եթէ քիչ մը աւելի խելք ունենան. — Ենթադրութիւն մը որ թերեւս բոլորովին իւթօքի չհամարուի: Անշուշտ իրենց ծանր պիտի գայ զանազան

նահանգներու կուսակալները եւ պիտաւոր պաշտօնեաները եւրոպացի տեսնել, բայց արդեօք աւելի գառնակոկիծ չի՞ պիտի մորմոքին երբ օտար տիրապետութեան տակ ընկնուին: Խօսելով միայն մեր երկիրներուն վրայ, եթէ Ռուսիան գրաւէ Հայաստանը և Կիլիկիան՝ մենք մեր արդի կացութեան մէջ զգալի կորուստ մը ըրած չենք ըլլար. լուծի փոփոխութիւն միայն. փոխանակ թիւրքին պիտի դառնանք Ռուսին սարուկը. բայց խալաֆները անկախութիւնն ինչ վրայ պիտի տան, ուստի մենէ աւելի իրենք պէտք է հետամնին այն հիմնական բարեկարգութիւններուն որոնց մով կրնան գէթ երկար ատենի համար ապահովել երկրին ընդհանուր անկախութիւնը: Ապակերտնացումով ու եւրոպական վարչութեամբ մեր վիճակը շատ կը լաւանայ, բայց խալաֆներուն ձեռք բերելիք օգուաններն ալ քիչ չեն ըլլար. տեղն է անոնց յիշեցնել մեր ազգային առածը. «Իրացնիդ կով մը ուզէ որ Աստուած քեզի եօթը տայ:»

Օրմանեան պատրիարք եւ իր խորհրդականները շատ գէշ ծառայութիւն մը կը մատուցանեն նոյն իսկ խալաֆներուն երբ սուլթանին առջեւ խալիկնալով կը ջանան անոր հատացնել թէ քանի մը կարկտան կրնան գոհացնել հայ ազգը և վերջացնել հայկական խնդիրը, որուն հետ կապուած է թիւրքիոյ գոյութեան խնդիրը: Եթէ այդ պղտիկ մտածութիւնները յաղթանակեն զարթումը ահել պիտի ըլլայ ամէնուն համար, ամէնուս համար:

Չփոխենք նպատակնիս. յառաջանանք հոն ուր կը գիմենք քան աարիէ ի վեր. փրկութիւնը հոն է:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ

(3)

Հիմա մեզի կը մնայ առաջ բերել այն իրողութիւնները որոնք սուր ու կրքատ նկարագիր մը տուած են Անդրկովկասի մէջ Հայերը եւ Ռուսերը իրարմէ բաժնող գիտաւթիւններուն: Պէտք է ցոյց տանք թէ ի՞նչպէս մաքերուն մէջ ախրող սխտիւնները պատրաստ են զայրանալու, եւ թէ ի՞նչ միջոցներով Ռուսիա, որ կ'ուզէ իր առանկաղնութիւնը պահպանել՝ ի՞նչ գնով ալ ըլլայ, կը մտաբերէ խորտակել իրեն գէմը գտած արգելքը:

Կովկասի հարաւային կողմը Ռուսիոյ պարագումը գիւրացնելու համար, ձարերը փութացին Հայերը իրենց քաշել խոտուածներով. իրենց անշահախնդրութեանը վրայ երջուրեցան եւ համուզեցին այդ քրիստոնեայ եղբայրները թէ զիրենց խալամ լուծէն կ'ազատէին՝ պարզապէս իրենց վերաբարձնելու համար իրենց ինքնօրինութիւնը: Հայերը ի զուր սպասեցին Նիքոլա Ա Կն այս խոտուածներուն իրականացումը: Ներսէս կաթողիկոսը, իր Եկեղեցիին ի նըպատաւ երաշխաւորութիւններու խօսք ըրած ըլլալով, Պետարապիա աքսորուեցաւ, եւ փորձեցին զանի գործածել լուսաւորչական Եկեղեցիին և ուսու եկեղեցիին ձուլմանը (*):

(* Տես Հ. Տէրբէ, «Արեւելի Եկեղեցին» (Ռուզիւտէ Տէօ-Մոնս, 1 գեկաեմբեր 1853):

Հայերը աւելի յոյս դրին Աեղբոսանոց Բ ի վրայ. անիկա Նիքոլայի շափ խոստօրէն մերժել չէր թուեր իր մականին ենթարկուած ժողովուրդներուն ազգային բնազդին նկատաւոր: Ասիկց գատ, Հայերով կը շրջապատէր ինքզինքը սիրայօժար. Արեւելեան պատերազմին ատեն, Փոքր-Ասիոյ ոռու գօրքերուն ճիւղ կը կարգէր հայ գօրաւարներ, Լօրիս-Մէլիքոֆ, Լազարեով, Տէր-Ղուկասօֆ. եաքէն, իրեն խորհրդակա՞նը ըրաւ Լօրիս-Մէլիքոֆը, եւ ծայրագոյն իշխանութիւնը տուաւ անոր: Հայերը յուսալիբ ըլլալու չէին իրենց նկատմամբ Աեղբոսանոց Բ ի ցոյց տուած բարեացակամութենէն:

Կայսեր ողբերգական մահը, 1881ին, դառն յուսախաբութիւն պատճառեց: Արդարեւ, Աեղբոսանոց Գ զահը ելլելուն պէս, հակազատական ազդեցութիւնները գերակշռեցին արքունիքին մէջ. կառավարութիւնը վերսկսաւ արհամարհել քաղաքական ազատութիւնը եւ Նիքոլայի թողած աւանդութիւններէն ներշնչուեցաւ: Այս վերադարձը գէպի բացարձակ միապետութիւնը՝ վհատեցուց Հայերը: Սիւալ չեն տեսներ կոր. շատ բան կրնան վախնալ միահեծան կառավարութենէ մը որ, առանց փոյթը ընկուցեզը եւ կրօնքը, կը կեղծնացնէ ու կը միաւորէ. փրկութիւնը կրնան սպասել ազատական կառավարութիւնէ մը միայն, սր, իր հպատակներուն անհատաբար իբր քաղաքացի ունեցած իրաւունքները ճո՞նչնալով, չի կրնար անտեսել այդ հպատակներուն հաւաքարար իբր ազգ ունեցած իրաւունքները:

Նոր կառավարութեան յարձակողական սլաւասիրութիւնը, անթոյլատու օրթոտոքութիւնը՝ արդարացուցին Հայերուն վախը: Ասոնք ընդհուպ տեսան թէ Ռուսիոյ հըպատակ ժողովուրդները ի՞նչ վտանգներու ենթակայ էին: Բողոնիայի եւ Հարուային-Արեւմտեան նահանգներուն մէջ, Հրեաներուն գէմ եպիսկոպոսի վարժունքը մը սկսաւ. առանց տուններուն վրայ կը յարձակէին, անոնց ինչքը կը կողոպտէին. կառավարութիւնը անտարբեր հանդիսատես կը մնար այս զղբալի տեսարաններուն. խռովութիւնները արտօնել կը թուէր ան, ժողովրդական ցատուկին թողալով ատուած ցեղ մը: Ժողովուրդը իր վրէժը կամ ընչաքաղութիւնը յապեցնելէ հոտքը, ձարը Հրեաներուն տառապանքին փոխարէն ուրիշ բան չէր ընէր բայց եթէ ծանրացնել անոնց գէմ հրատարակուած բացառիկ օրէնքները: Միեւնոյն ատեն կը ջանար ջնջել լեհ ազգութիւնը, ի ձայն մոսկովեան մամուլին ծափահարութեանց. ոռուերէնը պարտաւորել կ'ընէր ամէն գոյրոցներուն մէջ. Բօլոնիայի մէջ կաթոլիկ կրօնքը ամենաձանր գոյրութեանց կը մտանէր. կղերանոցներու գործունէութեան գէմ խոչընդոտներ կը յարուցանէր. արեան մէջ կը խեղդէր դաւադուութիւնները: Պալմիլիեան նահանգներուն մէջ, գեղացիները գերման կարուածատներուն գէմ կը զրգռէին. լուսերաւկանութեան գէմ խաշակութիւն մը կը կազմակերպուէր: Պէտք էր որ սուս ազգայնութիւնը ամէն տեղ գերակշիռ ըլլար:

Հայերը հասկցան իրենց վերապահուած վիճակը: Իրենց զգացած վախը մէկ բանի մտքեր մզեց բոնի միջոցներու զիմելու: 1883ին էր ասիկա: Բզգմաթիւ Հայեր

Գերմանիայէն կամ Պրոսիայէն կը գաղնային համաւարդկային փիլիսոփայութեամբ ու ազատական խմբորնրով խնդուած. ազատութեան սկզբունքներուն հաւատքը ընդունած էին Արեւմուտքէն, եւ խանդավառութեամբ կը փարէին անոր: Հայրենասիրական տենդի տագնապի մը մէջ, բոմբիթներ հիմնեցին Թիֆլիս եւ Երեւան, իրենց ըրազիւրները ցրուեցին, ազգային դազափարը քարոզեցին: Ոմանք յեղափոխական իրարանցումի մէջ նետուեցաւ, մէկ իրենց խնդրութիւնը տուեցին բանտարկութեամբ կամ ացորով: Այս խտութիւնները մեծ յուզում առաջ բերին Հայերուն մէջ: Տեղահուծիւնը անեցաւ երբոր 1884 ին ոռու կառավարութիւնը, ինքզինքին տուած իրաւունքը գործադրելով, մերժեց Էջմիածնի զահը բարձրացնել հայ պատգամաւորներու ժողովին ընտրեալը, եւ կաթողիկոս հոշակեց փոքրամասնութեան ընտրելին զոր իրեն անձնուէր կը կարծէր: Միեւնոյն ատեն, կառավարութիւնը բաւական թնուով հայ գոյրոցներ կը գոցէր, ու միսիոնարներ կը զրկէր՝ գեղացիներ անջատելու լուսաւորչական Եկեղեցիին եւ օրթոտոքո դարձնելու համար: Միսիոնարները իրենց հրահանգները կը ստանային Պ. Բոպիլետոնոսցեովն (*), եւ իրենց բրբբականաին յաջողութիւնը սպասուցնելու համար, խիզճ չէին ընէր հաւատափոխներդն խոտտանալու հոգ կամ դրամ: Այսպիսի վարժունք մը հայերուն էն նուրբ թելերը կը վիրաւորէր: Ռուսական կառավարութեան նկատմամբ կասկածատ ըլլալով, 1886ի օրէնքը, որ կոմիսսի ալ հարկադրեց զինուորական պարտաւորիչ ծառայութիւնը, ճնշողական միջոց մը թուեցաւ իրենց՝ իրենց գէմ ուղղուած. չկամութեամբ հպատակեցան անոր:

Թեւեւ ձարին կառավարութիւնը իրենց ազգային զգացումները կը վիրաւորէր, պէտք է ըսել սակայն թէ Հայերուն մեծ մասը փոյթ չունէին բացէլբաց կոխ մը սկսելու իշխանութեանց գէմ: Կը արանջային, կը գրգռուէին, կը դարձնէին. բայց խելքերնին կը հասնէր թէ ամուլ ընելիք, եւ վերջ ի վերջոյ կը համակերպէին Ռուսիոյ յոսի վարժունքին: Գործի հոգը ազգային հոգերէն առաջ կը գասէին. եւ որսւհետեւ կը բարգաւաճէին, շատ չէին գանգատեր իրենց բազուէն, մանաւանդ երբ իրենց ապահովութիւնը կը բազաւէին իրենց Թիւրքիոյ եղբայրներուն անձկութեանց՝ որոնք հարստահարիչ պէյերուն կամ արարաու ֆիւրտերուն աւշեւ կը զողային: Սակայն մէկ բանի Հայեր, երիտասարդական խանդավառութեամբ թրթուսն — ե որոնք շահեւարական աշխարհին չէին պատկաներ — կը փորձէին մաքառիլ այդ համակերպութեան գէմ, իրենց հայրենակիցներուն կը մեղադրէին իրենց գրական միաքը եւ կամբաստանէին զանոնք թէ իրենց անձնական շահը միայն կը մտածէին: Անոնց մասնամիջ կ'ընէին մոսկովեան գրութեան վտանգը: Անշուշտ, ոռուական հոգին վրայ, անհատական ստացուածքը կը պահպպուէր.

(*) Աեղբոսանոց Գ ի օրով Ս. Սինուկին պրօփուրոր, Պ. Բոպիլետոնոցեով կերպով մը հաւատատարածութեան նախարարը եղաւ:

բայց ազգային գոյութիւնը վտանգուած էր: Լաւագոյն էր գուցէ օսմանեան գրութիւնը, հակառակ իր մահուան եւ աւերման անդու սպառնալիքներուն. սուլթանին մահիկին տակ, կարելի էր գեռ անկախութեան երազել: Թիֆլիսի հարուստ վաճառականները, որոնք նախամեծար կը համարէին իրենց տալածոյնները ծախել քան ապստամբութիւն մը սարքել, խուզ կը մնային այս գրգռիչներուն որոնք պատերազմ կը բարոզէին ընդդէմ Ռուսիոյ. և «Հնչակ»ի ընկերութիւնը զոր ասոնք 1887ին հիմնեցին ուսական հողէն դուրս, Անդրկովկասի մէջ շատ անտարբերութիւն գտաւ:

Ռուսերը, որոնք շատոնց կը նեղուէին, ըսինք արդէն, Հայերուն բարօրութենէն եւ առիթը կը փնտռէին վրէժ լուծելու, կամովին շիտթեցին ժողովուրդը եւ քովթէներու վարիչները. հաւատալ կեղծեցին թէ գրգռութիւնը մակերեսը մնացած չէր, հապա ժողովրդին մէջ թափանցած էր: Օրինաւոր էր որ կառավարութիւնը հալածէր Հնչակիանները որոնք հայ գեղերը կը պտտէին, բանտերուն խորը նետեր զանոնք կամ Սիպերիա բռէր: Կայսրութիւն մը միշտ իրաւունք ունի իր ապահովութեանը հսկելու: Բայց կառավարութիւնը պէտք էր ատով շատանար եւ մէկ քանի տաք-գլուխներու խռովարարական ծրագիրներէն պատրուակ չհանէր ամբողջ հայ ազգին կասկածանքով նայելու, ու անոր դէմ լրտեսութեան եւ խռտանդունիքու դրութիւն մը կազմակերպելու:

Յայանի կ'երեւայ թէ այս անուղիղ մարտը ուրիշ բանի չծառայեց բայց եթէ ազգային համագումները ամբարանդելու, նոյն իսկ այն Հայերուն մէջ որոնք ամենէն բիշ կը հեռաբերուէին բազաքականութեան: Մէկ քանի օրինակներ ցոյց տուին ասիկա: 1893ին, Արծրունիի յուզարկաւորութիւնը առիթ տուաւ Հայերուն իրենց գագումները յայտնելու: Այդ մարզը, խիստ ու խրոխտ գիւմազութեամբ, կրակոտ աչքերով, դժնէ խոսնուածքով, բարձր իմացականութեան աէր կնոջ մը հետ հիմնած էր «Մշակ»ը եւ ամենէն յանդուգն ախոյեան եղած էր ազգային գաղափարին: Թաղումը Թիֆլիս տեղի ունեցաւ մեծ աղմուկով: Հայաստանի ամէն կողմերէն պատգամաւորութիւններ եկան: Հայերը սուգ պահեցին, շուկաներնին պանքաներնին գոցեցին: Տեղի ունեցած անլուր հանդիսաւորութիւնը՝ Ռուսերը ցոյց մը նկատեցին իրենց դէմ. թափօրին արգիւցեցին կառավարչապետին պալատին առջեւէն անցնիլ. բայց զօրքերը անզօր գտնուեցան Արծրունիի գաղաղին հետեւող ամբոխին դէմ, եւ Հայերը անարգել անձնատուր եղան իրենց հայրենասիրական բորբոքմանը: 1894 ին, կաթողիկոսին այցելութիւնը Թիֆլիսի Հայերուն՝ յողթանակ մը եղաւ: Հայրապետը խանգաւառութեան յափշտակութիւններով ընդունուեցաւ. ազգային երգեր կը թնդային ամէն կողմէ. Հայերուն կը թուէր թէ իրենց երազները իրականացած էին և թէ իրենց թագաւորը կ'ոգջունէին:

* * *

Օր մըն ալ եկաւ ուր Հայաստանի ժողովրդին մարտիրոսութեան լուրը թունդ հանեց բոլոր կովկասի Հայերը: Սասունի Լարգերը, 1894 հոկտեմբեր ամսուն, եւ անոնց յաջորդող կոտորածները սահմակեցուցին զանոնք: Կրնային անզգած մեալ զոհերուն արձակած օրհասի ա-

զաղակներուն: Թիւրքերուն գործած եղեանական արարքները իրենց աղիքները կը գալարէին, որովհետեւ իրենց ցեղն էր որ Թիւրքը ձեռնարկած էր բնաջինջ ընելու: Իրենց ցաւը անհուն եղաւ: Բայց միեւնոյն ատեն յոյսը ծրլեցաւ իրենց սրտին մէջ թէ ազատութեան ժամը մօտ էր, և թէ այդ անողոր արիւնահեղութենէն յետոյ Հայաստանի անկախ թագաւորութիւն մը պիտի կազմուէր Եւրոպայի պաշտպանութեան տակ, Էրզրումի եւ Վանի լեռներուն մէջ:

Իրենց տէրը որչափ որ թոյլ տուաւ ձայներնին բարձրացնել, Ռուսիոյ Հայերը իրենց պտրազ պղբայրներուն վրայ հրաւիրեցին Եւրոպայի ուշադրութիւնը եւ անոր աշակցութիւնը հայցեցին: Ըստ որում պատրանքներ պահած էին համամարդկային գաղափարներու ուժին վրայ՝ որոնցմով սնուցած էին զիրենք Արեւմուտքի մէջ, մեծ եղաւ յուսախաբութիւննին երբոր տեսան թէ քաղաքազէտներուն միակ օրէնքը շահն էր: Իրենց արիւնլուայ հայրենիքը պաշտպան չէր գտներ. ոչ մէկ ազգ կ'ուզէր աշակցութիւն ընձեռել զոհերուն կամ զինաթափ ընել գահիձները: Օգնութիւնը զօր կը սպասէին ձարէն, չեկաւ: Ռուսիա, Արեւելքի բրիտանեաններուն այդ բնական պաշտպանը, որ, 1877ին, անարդ ստրկութենէ մը ազատած էր Պոնայի եւ Պուլկարիայի բրիտանեանները, Ռուսիա բան մը չբրաւ վերջ գնելու համար իր սահմանադիւրս առջեւ տեղի ունեցած արիւնոլուտ զէպքերուն: Եւ սակայն, թերեւ Եւրոպայի ցասումը չպիտի գրգռէր եթէ իր կովկասի զօրքերը առաջ բռնէր դէպի Վան. անշուշտ կրնար օգտուիլ ալ ասկից ու իր երկրակալութեան բաղձանքները զոհացնել՝ միանգամայն արգարութեան ու մարդկութեան գործ մը կատարելով: Կովկասի Հայերը Ռուսիան պատասխանատու բռնեցին Թիւրքիոյ մէջ կատարուած խրժգժութեանց. իբր ոճիր մը անոր մեղադրեցին իր անշարժութիւնը եւ ամէն ժամանակէ աւելի արհամարհանք ցուցուցին անոր: Բայց ամենքն ալ անկի՛ղծ էին իրենց տըրտունչներուն մէջ: Բազում եռանդոտ հայրենասէրներ հետու էին ուսական զօրքերուն Թիւրքիա միջամտութիւնը հայցելէ: Ճգնուած Զէյթունը, կոտորածի մատնուած ամբողջ Անատոլուն, իրենց մէջ ջնջած չէին այն մտածումը թէ իրենց եղբայրներուն համար նախընտրելի էր հիմնուուն բոլոր արհաւիրքը կրել՝ քան թէ «Մոսկոֆ»էն փրկուիլ: Քաջ կը հասկնային թէ, եթէ Ռուսիա Հայաստանի լեռնազաշտերը զբաւէր՝ զանոնք խաղաղեցնելու համար, իրենց յոյսերուն վերջը պիտի ըլլար ասիկա:

Արդէն Ռուսիա հիմախուհիմա փոյթը չընէր ձեռք գնելու օսմանեան Հայաստանի վրայ: Մէկէ աւելի պատճառներ ցոյց տրուեցան ասոր: Իշխան Լուսինոֆի անձնական քաղաքականութիւնը առաջ բերին, — գտում քաղաքականութիւն մարդու մը որ բնաւ չէր բաղձար իր գիշերները խռովել եւ ուժը սպառել, եւ որ, ամէն բանէ առաջ արկածներէ հեռու փախչող, կը ջանար ամէն բան քնացնել, զօրծերը անուշ տեղը կապել կամ ձգձգել: Առաջ բերուեցաւ այն հակազգեցութիւնը որ Ռուսիոյ ինչպէս նաեւ Ֆրանսայի մէջ զոյացած էր ընդդէմ վեհանձնութեան քաղաքականութեան, եւ թէ Ռուսիա ձանձրացած էր աշխատել Արեւելքի բրիտանեաններուն ազատա-

գրութեանը, որոնք, ազատելէ ետքը, ապերախս կը գրանուին իրեն դէմ:

Առանց այս բացատրութեանց արժէքը անտեսելու, կարելի է ուրիշ բացատրութիւններ ալ տալ, կը բաւէ որ մարդ մեզի պէս կովկասի շրջանակին մէջ բնակած ըլլայ: Ռուսերը աճապարանք չունին իրենց կայսրութեան սահմանը ընդարձակելու Մասիսէն անդին: Կը հասկնան թէ խիզախութիւն պիտի ըլլայ Փոքր-Ասիոյ մէջ յառաջանալ՝ երբ Անդրկովկասի մէջ իւրացուցման գործը շատ հետի է աւարտած ըլլալէ: Այս գաշտի մարդիկը որոնք, Սիպերիայի եւ Թիւրքիստանի գաղթաւորման մէջ, հրաշքներ գործած են, կովկասի լեռներուն մէջ խոչընդոտներու հանդիպած են որոնց մինչեւ հիմա չեն կրցած յաղթել: Ո՛րչափ արեւելեան Եւրոպայի անհուն գաշտերը վարչական կեդրոնացման դիր կուզային, այնչափ Անդրկովկասը՝ իր պատերով ու ներքին պատուարներով՝ զիմպրելու էր իրենց: Իրօք ալ, Ռուսիա դեռ կրցած չէ տապալել պատնէշները որոնց կտին կ'ապաստանին անհատականութիւն եւ պատմական անհատութիւններ ունեցող ազգաբնակիչներն: Մնաց որ, կարծուածին չափ ջանադիր եղած չէ այս բանին, եւ, այս վերջին տասնըհինգ տարիներս, իր աչքերը յօժարակամ դարձուցած է դէպի արեւելի զիւրաւ իւրացուցուելիք երկիրներ: Կրնայ ցաւիլ որ չափազանց երկար ատեն անտես ըրած է իր օրէնքներուն, իր բարքերուն կազապարել կովկասի դէմ եւ վայրի գաւառիները: Եթէ արեւելի աշխատանք նուիրած ըլլար այս գործին, այսօր կըրնար աներկիւղ քալել դէպի Անատոլու:

Ռուսիան կեցնող մէկ բանն ալ այն անխտաահութիւնն է զոր Հայը կը ներշնչէ իրեն: Հայը կասկածելի է, ոչ թէ միայն իր անջատուելու, առանձին գոյութիւն մը ունենալու ձգտումներուն պատճառաւ, հապա նաեւ այն տարտամ ազատականութեան խմորին հասար գոր իր մէջը ունի: Նոյն իսկ եթէ Արեւմուտքի ազգեցութիւնը կրած չէ, հակում մը ունի ազատական ու ռամկավարական գաղափարներուն: Ի բնէ, ցեղագրական տեսակ մը ճակատագրականութեամբ, Ռուսին յարմարող ընկերութեան տիպարէն բոլորովին տարբեր տիպարի մը համար ստեղծուած է: Միահեծան Պետութեան մը մէջ, Հայը ուրիշ բան չի կրնար ըլլալ բայց եթէ ընդդիմադիր տարր մը: Ասկից գատ, եթէ յիշէք ինչ որ ըսինք Անդրկովկասի մէջ Հայերուն անտեսական գորութեան մասին, կը հասկնաք թէ Ռուսիա չճշի այսչափ երկիւղալի հպատակներու թիւը աւելցնելու: Երբ մէկ կողմէն Հրեաները կը մղէ իր սահմաններէն դուրս ելլելու, զարմանալի պիտի ըլլար որ, առանց հարկադրուած ըլլալու, քրիստոնեայ իսրայէլ մը միացնէր իրեն՝ Հայաստանը անելով: Հայուն վախը այսօր Ռուսիոյ մէջ մարդկութեան զգացումէն արեւելի գորաւոր է: Երբոր, ջարդերուն էն սաստիկ ատենը, Թիւրքերէն հաւաքածական Հայեր՝ յոգնութենէ ջախջախուած ու անօթութենէ կիսամեռ՝ ուսական հողին վրայ կը քաշկռտուէին, ես ակնաատես եղայ այս բանին, խաղախները, որոնց թիւը աւելցուցած էին, դէպի Թիւրքիա կը քշէին նորէն գաղթականներէն անոնք որ չէին կրցած փախչիլ իրենց հակողութենէն, ու զանոնք ես կը զրկէին իրենց սպաննիչներուն:

* *

Դրսի Հայերուն անգութ ճակատագրին անտարբեր, Ռուսիա պէտք եղածին չափ ժամանակ ունի ներսի Հայերով զբաղելու: Ասոնք, ինչպէս պիտի տեսնենք, պատճառ մը չունին ուրախ ըլլալու որ Արեւելքի դէպքերը իրենց վրայ հրաւիրած են ուս տիրոջը ուշադրութիւնը:]

Կովկասի Հայերը իրենք իրենց մէջ կրակոտ ուշադրութեամբ կը հետեւին Թիւրքիոյ գործերուն, եւ չեն ծածկեր իրենց տեղահութիւնը: Ո՛չ Ռուսերուն կը խառնուին ո՛չ Վրացիներուն. մեկուտի կ'ապրին, միշտ մույլ: Ընկերութիւններ կը հիմեն: Չիրենք յուզող կսկծալի համակրանքի տեսլիւն մէջ, հանգանակութիւններ կ'ընեն ի նպաստ իրենց տարաբաղդ հայրենակիցներուն: Ու ահա կ'եւլեն կ'ամբաստանեն զիրենք թէ կը գաւազրեն, թէ իւրարանցում մը կը սարքեն ընդդէմ Թիւրքիոյ եւ նոյն իսկ Ռուսիոյ: Մտքերու մէջ սա գաղափարը կը սպրդի թէ ուսական շահերուն դէմ կը գործեն, թէ Անդլիա — որ, մասնաւոր տագնապին սկիզբները, բազում արգարացի կասկածներ ներշնչեց — զանոնք իրեն կապած է իր փառամտ մեքենայութիւններովը:

Այս պատճառաւ, Հայերը ստիկանական խիստ հրկուցութեան մը տակ գրուած են: Կասկածելի երեւոյցները կը ձեռքաւարելին կամ կ'աքսորուին: Ասոնց մէջ, նախ, « Հնչակ » ի կուսակից մէկ բանի յեղափոխականներ, — անվախ եւ ուժեղ մարդիկ որոնք անկարողութենէ՝ միայն բան մը կը սոցասեն եւ անիշխանականութեան համար կ'աշխատին՝ հայկական գատին համար աշխատելով: Յետոյ, ստիկանութիւնը իր ուշադրութիւնը եւ խտտութիւնները կը դարձնէ այնպիսի մարդերու դէմ որոնք գաւազիրներ ըլլալէ շատ հետո ոն: Այս բոլոր գործողութիւնները ծածկող գաղտնիքը ներքի կ'ընէ ստիկանութեան վերագրել անիրաւ ձեռքաւարութիւններ որոնք թերեւս կատարուած չեն, բայց որոնք կ'արծարծեն ատելութիւնը սրուն աւարկայ է կառավարութիւնը:

Միեւնոյն ատեն մոսկովեան մամուլը, Հայերուն դէմ մղած յարձակումներուն դէմ, ամէն ծայրայեղութեանց անձնատուր կ'ըլլայ: Ըստ որում գաւազրութիւններ չեն զանուիր, կը հնարէ: Մէկ բանի լրագիրներու անուղղաւորութիւնը չափ ու սահման չունի, — լրագիրներ որոնք էն լուրջերը կը նկատուին, « Նովոյէ վրէմիա » եւ « Մոսքու վաքիա վիեռոմասդի »: Բեղապարկի մեծ օրաթերթը, օրինակի համար, կը պատմէ թէ 1896 յունուար 6ին Հայերը յեղափոխութիւն մը կազմակերպած էին Թիֆլիս: Յունուար 6ին տեղի կ'ունենայ ջրօրհնէքը. բոլոր բարձրաստիճան պաշտօնատարներուն ուղեկցութեամբ, կղերը կ'զարքին հետ թափոր կազմած կուրի եզերքը կ'երթայ. կէս օրին, կ'զարքը խաչ մը կը նետէ ջուրը, ուր յետոյ մարդ ու ձի կը լողնան: Կ'երեւայ որ կուրի կամուրջին տակ ակն սարքած էին, եւ չի գիտցուիր ինչպէս՝ Հայերուն փորձը վիժեցաւ...

Մամուլը պարտք կը համարի կառավարութեան մասնաւոր ընել հայկական վտանգը: Ամէն տեղ յեղափոխական գործակալներ կը տեսնէ: Դաւաղիրներուն գաղտնիքին լծափանցած ըլլալ կը յայտարարէ, եւ երեւան կը հանէ անոնց գրութիւնը որ կ'երեւայ թէ « երբեակի գրու-

թիւնն է», որ երբեմն Բողոնիայի ապստամբութեանց մէջ
գործածուեցաւ: Լոնտոնի հայկական բոմբիթէին իրաքան-
չիւր անդամը իր տնօրինութեանը տակ երեք մարդ սննի
կողիաս սրոնք կատարելապէս անձնուէր են իրեն եւ իրար
չեն ծանչնար. այդ երեք անդամներուն իւրաքանչիւրը կը
հրամայէ երեք ապահով մարդերու սրոնք, իրենց կարգին,
կը վարեն երեք սրիշներ:

Այս կերպով է որ կասկած կը սերմանեն, եւ վախը
կ'արծարծեն կողիասի ազգաբնակչութեանց մէջ: Կառա-
վարութիւնը թող կուտայ կամ աչք կը գոցէ, եւ զիրաւ
կարելի է հասկնալ թէ ինչո՞ւ: Որոշած է Հայերուն տնտե-
սական ուժը խորտակել, ինչպէս նաեւ խեղդել անոնց ինք-
նօրինութեան հակումները: Արդ, ատոր հասնելու հա-
մար, հարկ կը համարի բացառիկ օրէնքներու գիծը: Կը
յուտայ որ, եթէ խարտիս գտնէ այն կարծիքը թէ Հայերը
իրենց բարոտ մարտը յոռեզոյն թշնամիներն են ուստ
հայրենիքին, անոնց զէմ ձեռք առնել մտաբերած բմահաճ
միջոցները աւելի արդարացի պիտի երևան:

Կառավարութիւնը սկսած է գործել Հայերուն դէմ:
Իր առաջին հարը եղած է անոնց զարոցներէն խլել իրենց
ինքնավարութիւնը եւ առանձնաշնորհումները: Կաթողի-
կոսին տնօրինութեանէն քաշած առած է զիւզական վար-
մարանները զոր հարուստ վաճառականներ բացած ու
Եկեղեցիին իշխանութեան տակ զրած էին: Այսպէս ը-
սենք՝ աշխարհականացուցած է զանոնք՝ ուսուցնելու հա-
մար, հանրային կրթութեան նախարարութեան ենթար-
կելով: Բայց Հայերը նախամեծար համարած են գոցել
իրենց զարոցներուն շատը որոնք իրենց սեփականու-
թիւնն էին, քան թէ Ռուսերուն ձեռքը թողուլ զանոնք:
Անցեալ տարուքնէ ի վեր, նախնական կրթութիւնը հայ
գեղացիներուն կը տրուի մէկ մի քաւառակի մէջ երեք-չորս
գարտի մէջ միայն:

Լուսաւորչական Եկեղեցին ալ ուսուցուցան քաղաքա-
կանութեան զոհը պիտի ըլլայ: Կառավարութիւնը քաջ կը
գոչայ անոր ունեցած ուժը՝ իր չորս բոլորտիքը հաւաքելու
Հայերը: Կ'ուզէ զանի ճիւղ ուսուական վարչական կերպե-
րուն, կը մտաբերէ իր Սուրբ-Սինոդին կազապարին վրայ
ձեւուած կանոնագրութիւն մը հաղցնել անոր: Ալ աւելի,
կը խորհի Էջմիածնէն Բեղարդուրի փոխադրել լուսաւորչա-
կան Եկեղեցիին կեդրոնը: Լեռներու մէջ կորսուած, Բե-
ղարդուրէն 3,000 վերսկ հեռու, հայ վատիկանը կաս-
կած կը ներշնչէ իրեն, եւ իրեն այնպէս կը թուի որ կա-
թողիկոսը իր իշխանութեան ձեռքէն կը սարգի: Եթէ կա-
ռավարութիւնը իրագործէ իր յղացած ծրագիրը, Հայերը
իբր կրօնական կեդրոն պիտի ընտրեն Թիւրքիոյ կամ
Պարսկաստանի մէկ վանքը:

Հայերը իրենց հաւատալիքին մէջ նուաճած ատեն,
կը խորհին միանգամայն հարուածել զանոնք իրենց հա-
րըտութեան եւ աշխատութեան կողմէն: Կառավարութիւ-
նը կը ստիպեն որ մասնաւոր օրէնագրութեան մը ենթար-
կէ զանոնք, ինչպէս ըրաւ Հրեաներուն համար: Գիւղերը
եւ զիւզատնտեսական շահագործութիւնը պէտք է փակել
անոնց առջեւ: Անոնց արդիւնքն է զիւզական ստացուածք
գնել, աղարակներ վարձել: Պէտք է քաղաքներու մէջ պա-

հել զանոնք, եւ տնօրինութիւններ ձեռք առնել որպէս զի
քաղաքի արհեստները ամբողջ ձեռք չանցնեն: Ինչ որ
արդի Պետութիւնը մեզ կ'երաշխաւորէ, քաղաքացիական-
հաւատարութիւն եւ հանրային պաշտօններու կոչուելու
անխտրութիւն, Հայերը՝ ինչպէս Հրեաները՝ զրկուելու են
ատիկց: Պէտք չէ որ կարենան վարչական պաշտօններու
ստորին աստիճաններէն վեր բարձրանալ: Արդէն այս
շաւղին մէջ մտցուած է. կանոնագրութիւնները որոշած են
որ Հայերը շատ չնչին բաժին մը միայն կրնան ունենալ
կառավարական պաշտօններու մէջ: Պէտք է Հայերը զգրու
ձգելու դրութիւնը իր ծայրը հասցնել: Պէտք է նաեւ մաս-
նաւոր ասպարէզներու գուն ալ գոցել անոնց առջին: Այս
նպատակին հասնելու համար շատ սահմանափակ թուով
Հայ ընդունելու է գիմնագիտները եւ համալսարանները չ
միանգամայն, ազգելու է մասնաւոր մեծ վարչութեանց
վրայ սրոնք Պետութեան բարեացակամութեանը պէտք ու-
նին, ինչպէս երկաթուղիի ընկերութիւնները, որպէս զի
ո եւ է պաշտօն զլանան Հայերուն:

Հայերուն նկատմամբ կառավարութեան ի գործ դրած
խոշաւանգիչ միջոցները, այն բմահաճ գրութիւնը որուն կը
մտաբերէ ենթարկել զանոնք, սրիշ արդիւնք չեն կրնար
ունենալ բայց եթէ ցատուճ ու զայրոյթ առաջ բերել զս-
հերուն մէջ: Ուստիկանութեան մանրակրկիտ բնաւորու-
թիւնը ապահովապէս իր առաջադրած նպատակին հակա-
ռակ արդիւնքը պիտի ունենայ: Պիտի հրահրէ զաւազու-
թեան սգին զոր խեղդել կ'ուզէ. իր յարուցած ատելու-
թիւններովը, իր ծնուցած ծածկամտութեան վարժութեամ-
բը, Հայերը պիտի մղէ զազանի ընկերութեանց, գաւա-
զութիւններու: Արդէն Թիֆլիսի մէջ կարել է կազափար
կազմել թէ կասկածանքի ու լրտնութեան դրութիւնը ինչ
աստիճանի գրգռութեան կը հասցնէ սովորաբար խաղաղ
մարդիկ: Գալով Հայերուն գործունէութեան դէմ մաս-
բերուած սեղմումներուն, տարօրինապէս պիտի նպաստեն
գծտութիւնը զանուցնելու: Բացառիկ օրէնքներ չպիտի
ջնջեն հայկական խնդիրը. պիտի հրահրեն զայն:

Աւելի իմաստուն պիտի ըլլար բա՛ն մը չփորձել Հա-
յերուն ազատութեան դէմ եւ քաղաքացիական հաւատա-
րութիւն ապահովել անոնց: Պէտք է ջնջել այն օրէնքները
որոնք անոնց խղճմանքը կը վիրաւորեն, օրինակի հա-
մար այն օրէնքները որոնք կը հրամայեն օրթասացս կը-
րօնքին մէջ մեծցնել լուսաւորչականի եւ օրթոտարտի մի-
ջեւ կասարուած ամուսնութիւններէ ծնած սղաքները:
Այս տեսակ ամուսնութիւններ ոչոր շատ հազաւապէս կն-
Հայերուն ազատութիւնը ուսլով իրենց զաւակները ուզած-
նուն պէս մեծցնելու, ձարը թէ՛ քաղաքապիտական եւ թէ՛
մարդկային տնօրինութիւն մը ձեռք առած պիտի ըլլայ:
Եթէ Հայերը կայսերական կառավարութեանն օտանան ի-
րենց պահանջած խղճամիտ վարժուողը եւ արդարութիւնը,
չնորհապարա պիտի մնան անոր: Պէտք չէ մտնող որ
գործնական կեանքի եւ գործերու սերը անոնցմէ շատը
հեռի կը պահէ բնի միջոցներէ ու զանոնք զերծ կը կեցնէ
զիւթական երազներէ: Քաջ կը զգան թէ ուսական լուծը
թօթափել արդիւնքն է իրենց. զիտեն թէ Ռուսիա բնաւ
թող չպիտի տայ որ Մասիոի հիւսիսակողմը տարածուող

երկիրը չհոբէն կլէ: Անկարելիին զէմ՝ կուռելիք մարզի շին իրենք: Ռուսիա, ազատական երեւոյթով, կրնայ թեւ թեւ քնացնել անոնց հայրենասիրական յայտերը եւ քեզ քիչ շահել անոնց սիրտը: Ըսել չէ թէ Հայերուն եւ Ռուսներուն ձուլումը՝ կարճ ժամանակէն կարելի է սպասել. չէ՛: Հակառակութիւնը, աներկբայ, սերունդներ պիտի տեսնեն: Բայց դայն խաղաղեցնելու միջոցնե՛րը փնտռելու է: Չարին կազմալուծեալն կ'ընայ այս պարտականութիւնը: Այս պարտականութենէն խուսափելը կրնայ ազեաբեր ըլլալ, այն պահուն ուր ցեղերու ու կրօնքներու կոխումներ կը յառնեն ամէն կողմէ՛ ուժեղօրէն ցնցուող արեւելեան Եւրոպայի մէջ:

ԲԻԷՐ ՄՈՌԱՆ

Վ Ե Ր Չ

Օ Ր ՈՒ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ը

Գ Ա Հ Ի Ր Է, 3 փետրուար, 98

Արժիւի թեւարարութիւններ. — Եղբայրակցութեան շըլթան. — Կրօնական պատերազմ մը. — Պատերազմ մը. — Մէկ Հայաստան, մէկ Հայ. — «Չէյթուն». — «Ռըլի սը Բարի» եւ Չօպանեանի հատորը. — Հայ միաբեր:

Թախծութեան տակ ճնշուած սրտին ի՛նչ անուշ կը զարնէ Վրացիները որ մէկէն ի մէկ կուգայ կ'արթնցնէ յայտերով լեցրեալ ուրախ օրերու անցեալի մը յիշատակը. այսպէս հեշտապուր հնչեց ձայնը, երբեմն հայութեան սիրտը թունդ թունդ հանող, եւ նուազուն ա՛լ ատենէ մը ի վեր: Եսայի՛ ըսբունասպետ, պիտի կրնամ երկինքը լուսութեան ճերմակութեան հրաւիրել:

Կաթողիկոսութեան վանդակը իրեն զընտան՝ արծի՛ւր նորէն կը թռչի կը սաւառնի իսէականին բարձունքը ուր կէ, «Արարատեան Հրաւիրակ», սրբազան շեշտով կազմարարէ թէ հայրենի դաշտը մեզի իր մէջ ամիսփելու համար պէտք է զէպի հան ճամբայ ելլենք ամենքս ալ շղթայով մը պրկուած, շղթան եղբայրակցութեան, զոր թէ կտարակ ուզէ ժողովուրդ մը պիտի մնայ միշտ գերութեան լուծին նեղքն վերջը վայրահակ:

«Տիրիս»ն ու «Արմէնիա»ն մեզի բերին ճշմարիտ ազատասիրութեան պատգամը Հայրիկի բերնէն: Ամերիկայի հայերուն եւ անոնց միջոցաւ ամբողջ հայութեան «մեծ պատուիրանքը» կուտայ Հայրապետը:

«Այս է պատուէր մեր: Եթէ հարկ լինիցի՛ համաժողով կազմել ի Լուսաւորչական եւ ի համարիւն Բողոքական ազգայնոց, ի բաց դնել կրօնական խնդիր եւ վէճ. «Իբրեւ Հայ եւ համազգի եւ միեւնոյն Հայրենեաց» երկրի «դաւակ» խորհիլ վասն հայրենի շինութեան, խորհիլ եւ «առաւել» խորհիլ թէ որով միջոցաւ եւ հնարիւք փակել «զհասանս» գաղթականութեան եւ աշխատիլ միմեզմայն «հետզհետէ յետս» դարձունել զսղարմելի գաղթականս որք «ի Հայրենիս» ունին աշխատութեան արտօրայս եւ այլը «լեալ են այժմ» պատարկաշըջիկ, անպարծ ի թշուառ: Խոր.

«հիլ վասն նոցա որ ունին զուժ եւ զյարմարութիւն ի գործ «եւ յարուեստ. այս՛, վասն նոցա աշխատիլ եւ չթողուլ «պարսպ: Խորհիլ վասն կրթութեան պատանեաց եւ երիտասարդաց. պաշտպան եւ բարեբար գտանել վասն նս. «ցա, որ կարող լինիցին զուսումն եւ զպիտանի ինչ ար. «սեստ ի ձեռս բերել, որ օգտակար լիցի ի Հայրենի աշ. «խարհին մերում: Գոն եւ այլ բազմապիսի բանք եւ խոր. «հարգք, որք կարող են բանալ ասպարէզ առաջի համա. «ժողովին եւ արդիւնս յառաջ բերել ի շինութիւն քայքայ. «եալ Ազգին:»

Կաթողիկոսական այս կոնվակը երբ կը կարգանք արդեօք մեր օրերը հարիւրաւոր տարիներու անջրպետով մը բաժնուած պիտի չի համարե՞նք այն ժամանակէն ուր լուսաւորչական հայը մերկալանջ կը նետուէր թիւրք զինուորին սուլմներուն առջեւ որպէս զի իր արիւնը տայ ու արգիլէ հայրենի գերեզմանատան «պղծումը» բողոքական հայուն՝ դիակին հպումէն: Այդ թուականը մենէ զեւ եւ ոչ իսկ քառասուն տարիով կը հեռանայ, եւ սակայն ազատականութեան վազը արդէն իբր առասպելեան դարու մը աւանդութիւնը ենթադրել կրնայ տալ Էտիրնէ-Քարուի «կրօնական պատերազմը:»

Այդ պատերազմին շարժառիթը եթէ պահ մը վարսգուրենք, կամ աւելի ազէկը, եթէ իբր փիլիսոփայ ընդունինք որ ան ալ թերեւ իր ատենին ճշմարտութիւնը եղած ըլլայ, կ'ուր ինքնին իր գործողութիւններուն մէջ մեր արգի պատմութեան էն մէկ առոյգ զրուազը չի՞ յօրիներ:

Ժողովուրդ, զեսպան, Գուռ իրարու կը խոռոնուին Միրի-Քելամի գազաղին շուրջը: Նորապարձ բողոքական մը այդ Միրի-Քելամը սրուն մարմինին թաղումը Պոլսոյ Էտիրնէ-Քարուի գերեզմանատունը, Հայոց կրօնասիրական զգացումներուն մահաբեր հարուած կը համարուի. իսկ մերժումը՝ նուազում անգլիական զեսպանատան շուրջին: Գեսպանը, որուն հայրենիքը կաթողիկ ու բողոքական անգլիացիներուն կը զլանայ քովէ քով հանգչելու արատնութիւնը, կրնամ ր ազատութեան աւելի լայն արամսպիծ մը պահանջել արեւելցիին ուղեղէն: Քաղաքական նկատումը գանկաբանութեան շատ բարեկամ չէ. ուրեմն առանց բարակը փնտռելու զեսպանը Միրի-Քելամի գազաղը բրիտանեան զրօշին հովանաւորութեանը տակ կը հաչակէ: Գերեզմանատունն ալ հայ ջրհանկիրին կաշէլօտին խնամակալութեանը կը յանձնուի: Գեսպանը կը պնդէ, հայ ժողովուրդը «ոչ-կարեմը»ը կը պնէ: Գուռ իրիմի վաղորդայնը, Անգլիա թիւրքիոյ մէջ իր ազգեցութեանը գազաթնակէտը հասած, ափ մը խեղճուկ հայերու առջեւն էր որ պիտի ընկրկէր: Ի հարկին «զարնելու» ազգարարութիւն կ'ընէ Գրան:

Ու այդ «հարկը» անխուսափելի կը դառնայ: «Եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, օր չորրորդ» կը զրէին ժամանակին թերթերը: Չորս օր զիակը աստանդական կը թափափ. վերջացնելու է:

Հայ ջրհանկիրը, հայ բեռնակիրը, հայ արհեստաւորը ծառը թառած, գերեզմանաբարին վրայ կանգուն, գիշերն ու ցորեկը իրարու խառնած կը հսկեն որպէս զի յանկարծակիի չի գան. բայց ահա ուրիշ յանկարծակի մը:

Սպարապետ Ռիզա փաշան զօրքին զլուսը անցած կուգայ զործարքիզ զեւսպանական պահանջումը . իր հրահանգները բացարձակ են . բերանացի ազդարարութիւն ժողովրդին որ ցրուի, անաստութեան պարագային խօսքը հրացանին եւ սուինին : Հայը սուերը վեր կը թօթուէ, ու անխող՝ զընասակին դէմ բարը, սուինին դէմ կաշէգօտին ցոյց կուտայ :

Ազդարար շեփորը կը հնչէ . ահեղ վայրկեան . զինուորը կը շեշտէ զէնքը, հայը անխող : Եւ ահա սրարշաւ կը վազէ կուգայ կը հասնի կարգ մը . մէջը խոտոտով՝ մարդ մը . դմէհայեաց աչքերուն մէջ դարերու ատելութեան բոցը կը փայլի . կուրծքին վրայ « մահիկն ու թուրան » . և զայրոյթէն թրթոացող ձայնով կը հարցնէ .

- Ի՞նչ կ'ընես :
- Պիտի գարնեմ :
- Ժողովուրդս :
- Ա՛յո :
- Անդէ՞ն ժողովուրդս :

Բուպէական վարանումէ ետքը զինուորականը կ'մկմաւրով .

- Ա՛յո :
- Ա՛ն :

Ու ձեռքովը կուրծքէն կը բաշէ, կը փեռնեկաւ, կը հանէ, փաշային սաքին սակ կը նետէ շքանշանները .

- Քեզի ըլլան . առաջ հոս գարկ . տեղ բացի :

Փաշան խելայեղ երեսին վրայ կ'իյնայ, կը վերցնէ, կը համբուրէ, ճակտին կը դնէ իր ախրովը պատկերը մարմնացնող Մահիկ-Թուրա նշանը .

- Բաթրի՛ք, ի՞նչ կ'ընես, խենդեցա՛ր :

— Չէ՛, չի խենդեցայ : Ոտնակոխ ըլլան այդ նշանները եթէ ասոնք ժողովուրդս պաշտպանելու համար կուրծքիս վրայ պիտի չի կրեմ : Եթէ դուն թագաւորը կը ներկայացնես, ես ալ ան կը ներկայացնեմ . քեզի զինուորը, ինծի ժողովուրդը յանձնուած է : Չե՛ս ճանչնար իշխանութիւնս, նախ զա՛րկ ինծի :

Ռիզա փաշա, թիւրք բայց զինուոր, հիացած, ապշած, — եւ ամօթահար — ձեռքովը Սարգիս պատրիարքին կուրծքը կը կախէ նշանները, ու զօրքերը առած ես կը դանայ :

Գերեզմանատան սահմանազիւն դուրս, քսան մէթր անկին կը թաղուի Միրի-Բելամ : Ու Սարգիս պատրիարքն ալ օր մը մօրուքէն փետտուելով, աթոռներու տակ ջախջախուած, Պատրիարքարանէն դուրս կը նետուի :

Պատրիարքը որ Պալիս նորածին բողոքականութիւնը բանադրած էր՝ կաթողիկոսացաւ Մատթէոս Ա . անունով . ուրիշ Առաջին մը կը ջնջէ անոր կարգացած նշանները, եղբայրակցութեան համբոյրի հրաւերով : Մատթէոս Ա . ի եւ Մկրտիչ Ա . ի միջեւ միայն երկու կաթողիկոս անցան, ու այս կարճ ժամանակամիջոցը բուական եղաւ Ազատամտութեան բարգաւաճումին : Արագավազ յառաջգիմութիւն զոր կը պարտինք նոր գաղափարի մը՝ հայրենիքի պաշտպանը :

Եւ սրովհետեւ այսքան առաջ դացինք չի ջնջե՞նք « բո-

ղոքական » մակդիրը որ նշանակութիւն չունի : Ո՞վ բողոքող, որ՞ն դէմ բողոքող : Միթէ բողոքական կոչուող Հայերը կը պահանջեն Լուսաւորչական Եկեղեցիին վերիվայր յեղաշրջումը : Տիմար չի մնանք : Ասին մը մեր նախորդները միամտութիւնը առաջ տարին մինչեւ « Նոր-Ազանդ » կոչելու հիմնական բողոքական անուանողները, ինչ որ ենթադրել կուտայ թէ Լուսաւորչականներն ալ Հին-Ազանդ են : Ազանդ Ազանդի դէմ, հին թէ նոր, առաւելութիւնը : Վարչական գործերու համար բուական համարինք « Աւետարանական » անփաստ յորջորջումը .

— Աւետարանական : Բայց Լուսաւորչականները, միթէ անոնք ալ ավետարանական չե՞ն, պիտի հարցուի : — Ա՛յո՛, անոնք ալ « Աւետարանական » են . բայց կաթողիկոսները, միթէ անոնք ալ Լուսաւորչական չե՞ն . ո՞չ ապաքէն անոնք ալ « Լուսաւորչը մարդու չեն ի սար » ու եկեղեցիները Լուսաւորչի կը նուիրեն . ուստի ինչո՞ւ միայն մենք Լուսաւորչական կոչուինք :

Վարչական գործերու զերուրթեան համար քանի որ յորջորջումներ պէտք են, ընտրենք խաղաղասիրականները, կաթողիկ, Լուսաւորչական, ավետարանական բացառութիւնները, մինչեւ որ աշխարհական հայրենիքը ամենքը մէկ ձուլէ, մէկ Հայաստան, մէկ Հայ :

Ո՛րքան փափայելի էր որ կաթողիկոսական այդ պատուիրանքը իմանար քրիստոնեայ աշխարհը . յանձնարարական մը մեր գատին համար, այդ պատուիրանքը : Հալածեալ, ջարդուող քրիստոնեայ ժողովրդի ախաղսը կրնայ կարեկցութիւն հրաւիրել մեր վրայ բայց ո՛չ համակրանք, ո՛չ ակնածանք . ու ազատութեան արժանի չէ այն ազգը որ կարեկցութեան արժանի է : Չօրեղ միտք մը զօրեղ մարմնի մը հետ ապահովագոյն միջոցն է քրիստոնեայ աշխարհին սէրը եւ յարգանքը գրաւելու, ինչ որ շատ կը հեշտացնէ հայրենիք հասնելու ճամբան : Միրենք այն գրողները, իբր մեր գատին երախտաւոր աշխատողներ, որոնք Եւրոպայի ուղեղին մէջ կը ջանան թափանցել Հայուն կորովի մտքի եւ կորովի մարմնի սեփականատիրութեան համոզումը :

Լնտոն դանուած ասեմնս արտակարգ նեղութիւն կը դգայի երբ անգլիացիի մը ազգութիւնս ծանօթացնելու առիթը կը ներկայանար :

- Հա՛յ . իրա՛ւ . ի՞նչպէս ձեզի կը ջարդեն . խեղճեր :

Ու անգլիացին, մանաւանդ անգլուհին, կարծես կ'ուզէր հասկցնել թէ իրեն շատ հաճելի պիտի ըլլայի եթէ մէկը իմ ալ վիզս աչքին առջեւը կարէր . հայու մը մորթութեամբ հետաքրքրական տեսարանին ներկայ գտնուէր . տարակոյս չի կայ թէ անկեղծ արցունքներով . ո՛հ, այդ լալու մեծ ծառայութիւնը պիտի չի զլանար :

Ու սիրտինքի օր մը եղաւ, այնքան սիրութիւններէ յետոյ, երբ առտու մը ծանօթներս շնորհաւորեցին զիս .

- Աս ինչե՛ր էք ըրած եղբ . ապրիք . տեսէք, աստնկ :
- Նորութիւնը :

— Չկարդացի՞ք Տէյլի-Նիւուզը . նոր գերք մը հրա-

տարակուսեր է Բարիզ . ձեր Չէյթունի քաջութիւնները կը պատմէ, ու «Տէյլի Նիուզ» կ'ըսէ թէ՛ Պատմութեան արձանագրած փառաւոր էջերէն մէկը պիտի ըլլայ այդ ափ մը ժողովրդին զիմնադրութիւնը :

Ու կ'երթամ կ'աննեմ «Տէյլի Նիուզ»ը . Բարիզի թղթակիցը իբրև օրուան կարեւոր հրատարակութիւններէն մին կը ծանուցանէ, վրան ընդարձակօրէն խօսելով, **Չէթ-ԹՈՒՆԸ** . հեղինակ՝ Ազատի : Ու գրական «Աքառէմի»ն կը գրուատէ, նորէն ան ալ իր բարեգեան թղթակիցին միջոցաւ, հեղինակութիւնն ու հեղինակը, «մէկ ձեռքը սուր, մէկ ձեռքը գրիչ» : Ամենքն ալ այդ գրքին մէջ կը փնտռեն հին ցեղի մը առնական յատկութիւններուն հետեւը : Ու սիրով կը լեցուի հպարտութեամբ, բայց տխրութիւնն ալ հոգիդ կը պատէ : Օհ, ինչ ճակատագրային փոփոխութիւն հայ ազգին եթէ հայութեան սարսուռը ի լուր Չէյթունի շեփովին՝ տեսակ մը Պորսայի շահադիտութեան շվերածուէր հայութեան արտադրած թերեւս էն անսիրտ ջուխտակին ձեռքը :

Անցողակի տխրութիւն սակայն . կենդանութեան այդ յիշատակարանէն որ կը կոչուի **Չէթ-ԹՈՒՆ** կը բզկեք շունչ մը որ հաւաարի զգայնութեամբ տաքցնելով սրտերը, կը վանէր վշտի սկարութիւնը :

* * *

Մինչ այս բերրալիւր սպաւորութեան ներքեւ էի, «Ուրիւ սը Բարի»ն անսպասելի հրճուանք մը կը բերէ մեզի : կը խօսի Արշակ Զօպանեանի մէկ նոր հրատարակութեան վրայ : Բարիզեան մեծ հանդէսին այդ էջը ամբողջապէս ներկայացնեմ .

«Կ . Պոյսէն հասած հրամաններուն վրայ օսմանեան «բարձրաստիճան պաշտօնատարներուն միջոցաւ Հայաստանն պաշտօնապէս կազմակերպուած կոտորածները՝ «դէպի այդ զբաղղ երկիրը քաշեցին գրեթէ տիեզերական համակրանք եւ կարեկցութիւն : Բայց աշխարհ կ'անդիտանայ թէ Հայ ժողովուրդը փոքր-Ասիայ ազգաբնակիչութեան ցեղազրական զանազան խմբերուն ամենէն դուր-«ծունեան, ամենէն խելացին, ամենէն արդիւնաբերն է : «Իր պատմական գերը նշանաւոր եղած է անցեալին մէջ «եւ կը խոստանայ սպառազային մէջ ալ ըլլալ, բաւական է «որ թոյլ տրուի իրեն ապրիլ : Իր հին հեթանոսական գր-«բականութիւնը որմէ հատուկտորներ ունինք միայն, «ճանր ու առատաշնորհ գեղեցկութիւն մը կը փայլեցնէ : «Երկար ատեն գետինը խոնարհած թրքական լուծէն, հայ-«կական ցեղը այս դարուս մէջ զլուխը վեր կ'տանէ, եւնոր «գրականութիւն մը եկաւ անոր յարութիւն առած հոգիին «խանդավառութիւնները զրաւիչ արտայայտութեամբ եւ «րեւան բերել : Ահա այս ամէնը Պ . Զօպանեան այս պըզ-«տիկ հատորին մէջ նկարած է ուժեղ ու գունազեղ լեզուով «մը ուր կը զգաս հայրենասէրի մը ու բանաստեղծի մը «կրակոտ ու վշտահար հոգիին թրթուումը : »

Փրանսոացի մեծանուն գրագէտի մը, Անթոն Գրանսի նախագահութեանը տակ Բարիզ հրատարակային գումարումի մը մէջ Արշակ Զօպանեանի հայ գրականութեան վրայ ըրած բանախօսութիւնն էր որ սպառնուելով առաջ

բերաւ այս սպաւորութիւնը սրուն մասնակցեցան եւ որիչ այնքան թերթեր, հանդէսներ ու ամբողջ գաս մը զրոյներու ու խորհուրդներու :

* * *

Քանի մը գար առաջ օր մը առադաստանաւ մը մտտեցաւ Միջերկրականի մէկ ծովեզրը . մէջէն դուրս ցատեցին վշտաբեկ գէմքով բանի մը հոգի, բազմութիւնը հաւաքուեցաւ անոնց չորս կողմը . ո՛վ էին, ո՛ւսկից կուգային : Ուղեւորները մարած ձայնով մը ըսին .

—Չէք գիտեր, անանկ չէ . Պոլիսը առնուեցաւ . խառնեցըր տիրեցին Բիւզանդիոնի . ալքրիստոնեայ արեւելք չի կայ . ամէն ինչ կորսուեցաւ . միայն քանի մը զիրք ազատեցինք :

Ու նաւէն դուրս հանեցին Հոմերոս մը, Սոփոկլէս մը, հելլէն գրականութեան ուրիշ բանի մը պուլս-դործոցները :

Ուրիշ օր մը, քանի մը գար ետքը, դարձեալ ուրիշ նաւ մը կը մեկնէր Միջերկրականի եզերքէն, եւ կ'երթար այն ափերը ուր թիւրքին մահիկը կը ծածանէր . նաւը կը տանէր մեծահոշակ բանաստեղծ մը որ պիտի երթար Ելլազայի ազատութեանը համար մեռնիլ . Պայքըն : Անգլիացի բանաստեղծը կրնար ամբողջ մտաւոր Եւրոպայի պատգամաւորը համարուիլ : Հոմերոս ու Սոփոկլէս Ելլազայի հոգին պաշտել տուած էին Եւրոպայի, ու զարգացած Եւրոպան կը պահանջէր ազատութիւնը այն երկիրն որ գեղեցկութեան հայրենիքն էր եղած : Քանի մը զիրք անմեռ պահած էին, աշխարհի բոլոր նիւթական աղէտներու մէջ, ժողովրդի մը հոգին, եւ զայն սիրելի ըրած :

Հայը իր արկածալից կեանքին մէջ առեւտրական ժողովրդի մը համբաւը միայն թողած է Եւրոպայի . Քուլպեր, ինչպէս տեսանք այս տեղ եղած հրատարակութեան, կը յանձնարարէր ջերմապէս Արեւելքի մէջ հայ ժողովուրդը դործածել իբր ֆրանսական վաճառականութեան միջնորդ : Մաքի ու սրտի աշխարհին անծանօթ կը մնանք . ու օր մը մեր արիւնին հոսումը կը գնահատուի ոնգանաւորութեան ու առեւտրի նկատուիներու համեմատ միայն :

Հայը միաքունն է՝ հազարաւոր տարիներէ ի վեր դրականութիւն մը, մտաւոր կեանք մը կը շարունակուի անընդհատ : Արդեօք այս ամէնը ի պէտս դատին » հնարուած նորութիւններ չե՞ն, կը հարցնեն ու պիտի հարցնեն դեռ շատեր : Ինչքան մեծ է ուրիմն այն ծառայութիւնը զոր այս նախապաշարումը ջնջելու աշխատողները կը մատուցանեն մեր գատին : Հայրենիքին երախտագիտութեանը արժանի են :

ՀՐԱԶԻԱՆ

ԱՐԻԻՆՈՏ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Բ .

(3

Անքուն գիշեր մը անցընելէ ետքը, արշալոյսին վեր կ'ենլեմ, «Սիտոն»ի կամրջակին վրայ : Նաւին մէջ առջի իրիկուն հանգիպած մարդիկս, գրեթէ բոլորն ալ, հոն են : «Սիտոն»ի ճիշտ գէմը, քարս ինչպէս վրայ բացուող

փողոցի մը մէջ, քառասունի չափ թիւրքը կը խորհրդակցին ու ատեն ատեն կը նային փողոցին մէջ գտնուող երկու հին քարաշէն խաներու պատուհաններուն՝ որոնց փայտէ փեղկերը ամուր գոցուած են: Այդ խաներէն մէկին մուտքը երկրորդ յարկէն է եւ փողոցին վրայ գտնուած փայտէ սանդուխտով մը կը հաղորդակցի դուրսի հետ: Քանի մը հոգի վեր կ'ելլեն ու կը փորձեն դուռը խորտակել, բայց կ'երեւայ որ բաւական հաստատ է ու ներսէն ալ ամրացուցած են, այնպէս որ յուսահատ վար կ'իջնան:

Քիչ մը ետքը փայտէ շարժուն եղնարան մը կը բերեն ու պատին կոթնոցներով՝ երկու հոգի կը բարձրանան մինչեւ պատուհաններէն մէկը, որ, ինչպէս յիշեցի, փայտէ փեղկով գոցուած է: Երկաթի քանի մը հարուած բաւական կ'ըլլայ փեղկին թեւերէն մէկը քակելու: Եղնարանին վրայ գտնուողներէն մին վար կ'իջնայ, իսկ միւսը զգուշութեամբ գլուխը պատուհանէն ներս կը խօթէ ու բաւական ժամանակ կը մնայ: Վերջապէս գլուխը դուրս քաշելով՝ վարը կեցող խուժանին կը դառնայ ու կը գոչէ.

— Բան չի կայ, դուք ալ եկէք:
Ու պատուհանէն ներս կը մտնէ:

Իր քաջալերիչ հրաւերին կը պատասխանեն քանի մը թիւրք, որոնք վեր կ'ելլեն բիրերով զինուած:

Ներս մտնողներուն առաջին գործը կ'ըլլայ խանին դուռը բանալ:

Աւելի ազէկ տեսնելու համար անցած դարձածը՝ «Միտոն»-ի պաշտօնեաները քանի մը դիտակ կը բերեն, թէեւ պարզ աչքով յստակօրէն կը տեսնուէր ամէն բան:

Պահ մը ետքը պատուհանին առջեւ կ'երեւան երեք թիւրք եւ դուրս՝ սալայատակին վրայ՝ կը նետեն հայ բեռնակիր մը, արդէն կ'իստաւեւ վիճակի մէջ: Փողոցը գտնուողները ցնծութեան աղաղակներով կը յարձակին որսին վրայ ու քանի մը հարուածով գործը կը լմնցնեն:

— Անդի՛ն գացէք, կը պոռայ մէկը պատուհանէն, ու Հայու մը նոր մարմինը կ'իջնայ գետին:

Երէկուան սրտատրոփ անձկութիւնը ու զայրացումը չի տիրեր շագնաւին մէջ:

Ա՛լ վարժուած են այդ տեսարաններուն:

Նաւին պաշտօնեաներէն մին՝ մատակարարը՝ որ գծադրել զիտէ, իր տետրակը կը բերէ, մեր առջեւ պարզուած պատկերին ուրուագիծը առնելու համար:

Չորս հոգի՛ այնպէս՝ պատուհանէն մէկիկ մէկիկ վար կը նետուին ու բիրերու տակ կը մեռնին:

Չմտնամ ըսելու որ երեք ստիկան ներկայ են այդ գործողութեան, սակայն իբրեւ հանդիսատես միայն: Իրենց մէջ մին կը մասնակցի սպաննութեան:

Մսկայն փողոցը գտնուող թիւրքերը կը սկսին կատաղի իրենց վերի ընկերներուն դէմ, եւ իրաւունք ալ ունին:

Վար նետուած Հայերուն եւ ո՛չ մէկուն գրպանէն ժամացոյց կամ սաակ կրնան գտնել:

Յայտնի կ'երեւայ որ վերը գտնուողները գտնոնք կուտայտելէ ետքը՝ դիակները միայն աուած են վարիններուն:

Վարինները՝ զայրացած՝ սանդուխտէն վեր կը սկսին ելլել, մինչ միւսները կը փորձեն դուռը գոցել անոնց երե-

սին. բայց ժամանակ չեն գտներ եւ դրանք մէջ կ'առազի կուտ մը կը սկսի երկու խուժերուն միջեւ:

Չայները ա՛յնչափ կը մեծնան որ ստիկաններէն մէկը թօփհանէի պահականոցէն քանի մը զինուոր կը բերէ, որոնք կը յաջողին վերջ տալ կուխին եւ ամենքը մէկ ճամբու գնել:

Փողոցը կ'ամայանայ: Միայն չորս պիակները կը մնան դետին փողոցը:

Այն ատեն ստիկանները կը մտնեն խանին մէջ ու քիչ մը ետքը սանդուխտ գլուխը կը բերեն գաւառացի կնիկ մը, փոքրիկ մանուկ մը կուրծքին վրայ: Կինը կուլայ ու կը պոռայ անպաղար, մինչ ստիկանները կը ջանան վար իջեցնել զինքը: Վերջապէս կը ստիպուին թեւերէն քաշելով մինչեւ փողոց բերել: Կինը կը քալէ դիակներուն մէջէն ու մէկէն ի մէկ կը կայնի այդ դիակներէն մէկուն առջեւ, աւելի սաստիկ աղաղակներ արձակելով:

Կ'երեւայ որ իր մարդն էր գետին երկնցածը:

Ստիկանները միշտ կը ջանան դէպի քարափը բերել զինքը:

Կինը յանկարծ՝ տղան որ գրկած էր՝ իր կրկանը զիակին վրայ կը ձգէ ու կը սկսի փախչիլ: Ստիկաններէն մին կ'առնէ տղեկը ու կնոջ ետեւէն հասնելով անոր գիրկը կուտայ: Մայրը ետ կը դառնայ ու նորէն տղան կը նետէ զիակին վրայ ու այս անգամ աւելի արագ կը սկսի վազել: Ստիկանը կը ստիպուի տղան առնել ու կնոջ ետեւէն իջնալ, որ արդէն բաւական հեռացած է: Տղան իր պզտիկ թեւերովը կը պլուրի ստիկանին գլխին ու անոր ֆէսը վար կը ձգէ: Ստիկանը կը ծփի, ֆէսը կ'առնէ ու նորէն կ'արշաւէ, մէկ ձեռքով տղան դրկած ու միւսովը ֆէսը բռնած, մինչ կինը վազելով հանդերձ կը շարունակէ իր լաց ու կոծը, ատեն ատեն գոչելով.

— Մարիկ, խրիտոս...
Ողորմ՝ ու ահաւոր բան մըն է ասիկա:

Արեւը ծագած է հիմա ու նորէն կը սկսին լսուիլ հրագէտի ձայները:

«Միտոն» նոյն օրը ճամբայ պիտի ելլէ ու պէտք է հարկ եղած պարենը հայթայթել: Մատակարարը ու նաւագետը ցամաք կ'ելլեն երկու նաւաստիներու հետ որոնք ուղիղութեամբ բռնած են ձեռքերին: Անձկութեամբ կը սպասենք իրենց վերադարձին որոշ լուրեր առնելու համար ու կը շարունակենք, նաւին կ'ամրապահեն, մեր գննութիւնները:

Ամբողջ քաղաքը սօճական օրի մը կերպարանքը առած է կարծես: Օտար տէրութիւններու դրօշակներ կը ծածռնին շատ մը շէնքերու վրայ, ծովին երեսը ծածկուած է անհամար նաւակներով ու շագնակոյկներով, որոնք անընդհատ կ'երթեւեկեն, դեսպաններու պահակ շոգնանները, որոնք առտուան դէմ եկած էին, շարուած են թօփհանէի դիմաց: Տուներու բոլոր վերնայարկները լեցուն են կիներով ու մարդերով: Քարափներուն վրայէն կ'անցնին կը դառնան հեծեալ բարձրաստիճան զինուորականներ:

Եթէ դիակները չըլլային մեր աչքին առջեւ պիտի կարճէինք թէ թաղաւոր մը այցելութեան եկած է սուլթա-

նին, այնչափ օգոտոտս ԱՅ ի հինգշաբթին կը նմանէր
Գերմանիոյ կայսեր Պոլիս հասած օրին:

Մատակարարը կը վերադառնայ շոգենաւ յոյն մաս-
վաճառի մը հետ ու սոսկալի լուրեր կը բերէ մեզի:

Պոլսոյ մաքսատան ամբողջ հայ բնակիչները, երեք
հարիւր հոգի, ջարդուներ են գիշերը, Թիւրքերու եւ Քիւր-
տերու կողմէ, մաքսին մէջ:

Խասպեղ՝ բոլոր Հայերու սունները կոխեր ու կրիկուար-
գիւր սուրէ անցուցիր են:

Կալաթայի հայ խանութները եւ վաճառատունները
թալլիր ու պահապանները սպաննեն են:

—Նոյն իսկ գուռներն ու պատուհանները քակեր տա-
րեր են, կ'ըսէ մատակարարը ինկալով:

—Գոնէ հիմակ հանդարտութիւնը տիրած է, կը հար-
ցընենք:

—Ի՞նչ կ'ըսէք, կը պատասխանէ, երթուպարձիս մի-
ջոցին տասնէն աւելի մարդ մեռուցին անցած փողոցներէս:

Այս խօսակցութեան միջոցին, գուրսը, քարափնիւրուն
վրայ, արտասովոր իրարանցում մը տեղի կ'ունենայ: Ու-
տիկանները խուճը մը թիւրքերու հետ կուզան այն փողո-
ցը ուր գեռ չորս Հայերու զիակները կեցած են: Աճապա-
րանքով կը վերցնեն զանոնք ու անյայտ կ'ընեն կողմնա-
կի փողոցներէն մէկուն մէջ. յետոյ սայլակ մը բարակ ա-
ւազ կը բերեն, այն աւազէն զար փողոցները կը ցանեն
սուլժանին Պոլիս անցած օրը, եւ անսով կը ծածկեն արիւ-
նի արատները որոնք առջի օրերէն ի վեր գետնին վրայ
կը տեսնուին: Այս գործողութիւնը աւարտելէ ետքը չորս
թիւրք, սպաննուած Հայերուն արախճիկները, զորոնք ա-
ռաջուց առած էին, գլուխներն կ'անցընեն ու խանին սան-
դիւն վեր ելլելով՝ կ'անցնին պատուհաններուն առջեւ,
որոնց փեղկերը կը բանան, ու կը նստին հանգարակի:

Նախ չենք հասկնար թէ ի՞նչ է այդ ներկայացումի մը
պատրաստութեան պատճառը: Քիչ մը ետքը կը լուսա-
բանուինք, երբ գեոպանաաներու երկու թարգման իրենց
խափազներով կուզան Թօփհանէի կողմէն ու իբր թէ քըն-
նութիւն մը կը կատարեն: Իրենց կ'ընկերանայ թիւրք մը,
մաքուր հագուած. ստտիկանութեան կողմէ բարձրաստի-
ճան պաշտօնեայ մը կը թուի ըլլալ: Թարգմանները պահ-
մը կանգ կ'առնեն փողոցին բերանը ու կը զիտեն կեղծ
Հայերը որոնք պատուհաններուն առջեւ սիկառէթ կը ծը-
խեն, ու կ'անցնին կ'երթան:

Յերեկուան ճաշէն ետքը հրազէնի ձայները կը շատ-
նան: Ամէն բոպէ պայթումներ կը բռնեն:

Ամբողջ քարափը լեցուած է հեծեալ ու հետեակ
լինուորներով՝ որոնք ծովեզրը կեցած՝ հրացաններն ուղղած
են գիմացի շէնքերուն վրայ:

Շոգենալին մէջէն գիտակներով կը նայինք ամէն
կողմ:

Զինուորները Քարաքէօյի կամըջին մօտ տան մը
վրայ անընդհատ հրացան կը պարպեն, յետոյ կը մանեն
գանէն ներս ու վեց հոգի վար կը նետեն պատուհաններէն:
Մեռած, ս'զջ. չենք զիտեր:

Անդին՝ մզկիթի մը մինարէին վրայ կ'երեւայ թուրք
փոթթոցաւոր մը՝ որ հրացանը ուղղած՝ նշան կ'առնէ ու
կը պարպէ մօտ սկսյ աւաններուն վրայ: Հետեւն հետու ա-

կանջնուս կը հասնին մեռուելու վրայ եղող յուսակտուր
մարդերու խեղճուկ ձայները:

Ասանկ բան անկարելի է երեւակայել:

Կամաց կամաց իրիկուն կ'ըլլայ ու մեկնումի ծամը
կը մօտենայ: Առաջին ճամբորդը սր շոգենաւ կուզայ Հայ
մըն է, Հանրային Պարտքի վարչութեան պաշտօնեայ մը
որ Սէլանիկ պիտի երթայ: Յետոյ կը տեսնենք որ կիսե-
րով ու ծառաներով շրջապատուած երիտասարդ հիւանդ
Թիւրք մը կը բերեն շոգենաւ. իր հետեւորդները տանը-
հինգ հոգիի կը հասնին, որոնց կէսը առաջին կարգի տու-
սակ առած է: Սէլանիկցի երեւելի աղա մըն է որ դար-
մանուելու համար Պոլիս եկած է ու քաղաքը կը վերապառ-
նայ: Նիհար, տժգոյն, կմախացեալ դէմք մը ունի, որուն
վրայ թոքախտը իր գծնէ կնիքը դրած է: Շոգենալին վեր-
նայարկը, միասին բերած բազկաթուփ մը վրայ կը հանգ-
չեցնեն զինքը, ծունկերը ծածկոյթի մը տակ պահպանելով,
հակառակ տաք արեւին. ու երիտասարդ գեղանի կինը
քօյն ի վեր կը կենայ եւ ատեն ատեն թաշկինակով մը
հիւանդին ճակատը կը սրբէ:

Ուրիշ ատեն այդ տեսարանը գթութիւն պիտի ներ-
շնչէր մեզի. հիմակ տեսակ մը հրճուանք կը զգանք այդ
մեռնելու պատրաստուող Թիւրքը զիտելով:

Նախին բժիշկը կը մօտենայ հիւանդին ու խիստ ձայ-
նով մը կը հարցնէ.

—Ո՞վ է ասոր սէրը:

—Ի՞նչ կայ, պարոն, կը միջամտէ Հրեայ մը որ թիւրք
աղային հետեւորդներուն մէջ կը գտնուէր իբրև թարգման:

—Աս մարդը ճամբան պիտի մեռնի, չենք կրնար ըն-
դունիլ շոգենալին մէջ, կը պոռայ բժիշկը:

—Ի՞նչ կ'ըսէք, կը պատասխանէ Հրեան զող ելած,
շոգենալին գործակալութիւնը սոստակները տուաւ. Սէլա-
նիկի ձեր անօրէնը մեր էֆէնտիին բարեկամն է ու էֆէն-
տին յատուկ յանձնարարական ունի անոր կողմէ, սրպէս
զի շոգենալին մէջ աղէկ նայուի իրեն:

—Չեմ ընդունիր, կը գոչէ բժիշկը, պէտք է որ դուրս
հանէք անմիջապէս այս մահամերձը:

Հրեան կը զիմէ նաւապետին՝ որ հոն կեցած է:

—Ես չեմ խառնուիր, բժիշկին զիտնալիք բանն է, կը
պատասխանէ նաւապետը ոչոյս պաժանութեամբ, եթէ հարկ
տեսնայ դուրս հանելու, պէտք է դուրս ելլէ, կը հասկնա՞ք:

Յայտնի է որ այդ խստութիւնը զրգոտուած ցառումի մը
արդիւնքն է: Երկու օր առաջ արգահատանքով պիտի ըն-
դունուէր այդ հիւանդը: Ու այս միջոցին ամենքս ալ կ'ու-
զենք որ դուրս նետուի խեղճ մարդը:

—Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըսեն կոր, կը հարցնէ հիւանդը
Հրեային:

Հրեան կը թարգմանէ բժիշկին ու նաւապետին խօսքե-
րը, բացատրութիւնները մեղմացնելով:

Բժիշկը գոհ չըլլար այդչափով ու «Սիտան» ի թարգ-
մանը կանչել տալով՝ անոր բերնով ըսել կուտայ հիւան-
դին որ ինք ճամբան կրնայ մեռնիլ, հետեւաբար անկարե-
լի է շոգենալին մէջ ընդունիլ զինքը:

Թոքախտաւորին աժդոյն այտերը կը կարմրին մէկէն
ի մէկ, անզօր բարկութեամբ մը կը փորձէ կայնիլ ոտքե-
րուն վրայ ու կը գոչէ.

—Օ՞ն, շո՛ւտ վար իջնանք, վայրկեա՛ն մը չեմ ուզեր
կենալ հոս:

Հիմա կը խորհիմ թէ սրչափ շար էի այդ միջոցին՝ հաճոյք զգալու համար այս տեսարանէն:

Մարդը բազկաթոռի մը վրայ նստեցուցած վար կ'իջեցնէն ու իրեն ընկերակցող կ'իները, որոնց մին մայրն էր ու միւրը ամուսինը, կը սկսին լալ:

Վարը, քարափին վրայ կը սնեն բազկաթոռը ու կը հանդիսանան հիւանդը որ այս միջադէպէն յուզուած կը հեւայ ու կը հազայ շոր շոր:

Նոյն միջոցին նաւաստիները կը նշմարեն որ մաքսատան թիւրք պաշտօնեաներ գաղտնագողի շոգենաւ մտած են եւ իմաց կուտան նաւապետին որ հրաման կ'ընէ թեւերնէն բռնել ու դուրս նետել:

— Թիւրք մը ստք չի՛ պիտի կոխէ հոս, կը պտոյայ բարկութեամբ:

Ի՞նչ մը ետքը խուճ մը Ալլպանիացի մահմետական ուղեւորներ շոգենաւ կուզան Սէլանիկ երթալու համար:

Խնդիր կը ծագի թէ պէ՞տք է ընդունիլ զիրենք:

— Ո՛չ, դո՛ւրս հանեցէք, կը վճռէ նաւապետը:

Ու Ալլպանիացիները թեթեւ ընդդիմութենէ մը ետքը վար կ'իջնան:

Ալ մեկնումի ժամը կը մտնենայ: Ամենքս ալ գոհ ենք որ վերջապէս պիտի ձգենք այս քաղաքը: Շոգենաւին ծինելոյցը կը մխայ ու «Սիտոն» առաջին սուլուսը կ'արձակէ:

Մէյ մըն ալ ահա՛ Մէսաժրոյ Մատթիմ ընկերութեան գործակալը շոգենաւ կուզայ ու հրահանգ՝ կը բերէ ֆրանսական զեւսպանատան կողմէ որ «Սիտոն» չմեկնի, քանզի ջարդը չէ դադրած տակաւին ու գուցէ պէտք ըլլայ որ ֆրանսական հպատակները շոգենաւ փոխադրելու հարկը զգացուի: Գործակատարը կը յայտարարէ որ «Ժիոսոն»-ի հրաման տրուած է մեկնելու եւ միայն «Սիտոն» պիտի մնայ Պոլիս մինչեւ որ հանպարտութիւնը վերջնապէս տիրէ:

Առջի օրուրնէ ի վեր «Ժիոսոն»-ի մէջ ապաստանած են շատ մը եւրոպացի ընտանիքներ որոնք Մէսաժրոյի շոգեմակոյցիով պիտի փոխադրուին «Սիտոն»-ի մէջ:

Այս որոշումը մեզի հազորդիլէ ետքը գործակալը դուրս կ'ելլէ:

Մէսաժրոյի շոգեմակոյցը քիչ մը ետքը կը բերէ խուճ մը ֆրանսացի ընտանիքներ ու նորէն կը մեկնի երկրորդ անգամ՝ դալու համար:

Երկու օրէ ի վեր տեսածներս այնպիսի նողկանք մը ազգած էին ինձի որ, թէեւ շոգենաւին մէջ ապահով, սաւ կայն կ'ուզէի ժամ առաջ հեռանալ այս անիծեալ քաղաքէն, սուտի երբ տեսայ որ «Սիտոն» զեւ քանի մը օր պիտի կենայ Պոլիս, նաւապետին զիմեցի ու ինչորեցի որ զիս շոգեմակոյցիով «Ժիոսոն» փոխադրէ ծովին կողմէ: Նաւապետը ինչորեքս ընդունեց. բայց ծովին վրայ լեցուած էր ոստիկաններով՝ որոնք ուշադիր կը հսկէին՝ նաւակներու մէջէն՝ որպէս զի ոչ ոք կարենայ փախչիլ օտար նաւ մը:

Երբ շոգեմակոյցը կրկին եկաւ՝ զիս զգուշութեամբ իջեցուցին մէջը ու զրին հնոցապաններուն մօտ, հանքածուխի կոյտի մը ետեւ կ'ծկուած:

Այս կերպով ինքզինքս նետեցի «Ժիոսոն»-ի մէջ:

Հագուել թէ ոտքս շոգենաւ զրած էի, պարանոցներ սկսան քակել: Նոյն միջոցին ամբողջ քարափները կատարեալ պատերազմի դաշտի մը երեսլիթը ունէին: Զին-

ուորները անընդհատ հրացան կը պարպէին զիմացի շէնքերուն վրայ, խորտակելով պատուհանները. նոյնպէս զինուորներ կ'երեւային շատ մը շէնքերու տանիքներուն վրայ: Կամրջին վրայ մէկ մարդ մը չի կար. միայն երկու ծայրերը հեծեալ զինուորներով լեցած էր:

Չեմ կրնար բացատրել այն հրճուանքը զոր զգացի երբ «Ժիոսոն»-ի պատուակը սկսաւ շարժիլ:

Ալ կը հեռանայինք կոր...:

Կամաց կամաց բաժնուեցանք քարափներէն ու շոգենաւը քիթը ուղղեց զէպի Մարմարա:

Բայց ահա՛ «Ժիոսոն» իր ուղղութիւնը կը փոխէ ու զէպի Գատը-Գիւլ, Մօտայի ծոցը կը սկսի առաջանալ: Նախ կը կարծենք թէ հոսանքն է որ նաւը հոն կը մղէ եւ մտատանջութիւն մը կը տիրէ կամրջակին վրայ գտնուող ուղեւորներուն մէջ: Տեղեկութիւն կը հարցնենք պաշտօնեաներէն մէկուն, որ կը պատասխանէ.

— Բան չի կայ, միայն թէ քիչ մը պիտի կենանք հոս, նոր ճամբորդներ առնելու համար:

Եւ յիրաւի «Ժիոսոն» Բալամիշի առջեւ կը կայնի:

Մեր արդէն յուզուած երեւակայութիւնը կը սկսի չափազանց հետաքրքրուիլ այս սնցած դարձածէն: Ամբողջ ճամբորդներս եւ նաւաստիներուն մեծ մասը խմբուած ենք նախն եզրը եւ ուշադրութեամբ շորս բոլորտիքնիս կը նայինք:

Շոգեմակոյցի մը կը մտնենայ մեզի, որ ֆրանսական դրօշ կը կրէ: Ի՞նչ մը ետքը կը ճանչնանք զայն, իր ճեմակ գոյնէն. ֆրանսական զեւսպանատան շոգեմակոյցին է:

Վերջապէս կը հասնի «Ժիոսոն»-ի մօտ: Խցիկին մէջ միայն երկու հոգի կայ. զարմանքով կը տեսնենք որ նրստարաններուն վրայ դուած են շատ մը բէլոլէքներ:

Երբ շոգեմակոյցը կը մտնայ «Ժիոսոն»-ի երանարանին՝ ծածկուած տեղէ մը հետզհետէ դուրս կուզան տասներեօթը հոգի, քանի մը հատը բեռնակրի հագուստով, ուրիշներ հինուսին լաթեր հագած ու երկուքը՝ մաքուր, սեւազգեստ ու զլխարկաւոր:

Իրենց հետեւն վեր կ'ելլեն ֆրանսական եւ ռուսական զեւսպանատներու երկու առաջին թարգմանները, Պ. Ռուէ և Պ. Մաքսիմօֆ:

Ֆրանսացի ճամբորդ մը որ վերնայարկէն կը դիտէր այս տեսարանը եւ որուն քով կեցած էի, յուզեալ շեշտով մը կը գոչէ.

— Ա՛հ, ահաւասիկ զեղեցիկ բան մը, հայ փախստականներ մեր դրօշակին տակ պահպանուած, հիմա կը գտնեմ ու կը ճանչնամ իմ հայրենիքս, ա՛հ, զեղեցիկ է ասիկա, գոհ եմ:

Խեղճ մարդը կը սխալէր: Պանքան մասնող Դրօշակեաններն էին որ կը բերէին եւ ո՛չ թէ փախստականներ:

(Շարունակելի) ՎԱՀՐԱՄ

Ֆ Ր Ա Ն Ս Ա Յ Ի
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ. (2)

Արեւելուն ինչորեք «Ասիայ կողմէն» բացուելով, հարկ էր որ Ֆրանսոս մէջը մտնէր հետեւելու՝ համար իր աւանդական քաղաքականութեան, որ է արգիլել կամ ուշացնել

Թիւրքիոյ բաժանումը որմէ իրենց որոշեալ մասը պիտի առնեն պետութիւններէն շատերը, բայց Պրանսայի բաժինը ինչպէսքէ ըլլայ՝ ատիկա չերենար: Ազէկ գիտենք թէ Թրքական տիրապետութիւնը փշուր փշուր ըլլալով օր մը պիտի վերջանայ, սակայն մենք յամբընթաց կազմալուծութիւն կ'ուզենք. քայքայումէն օգտուելու են ո՛չ թէ մեծ պետութիւնները որոնց ընդարձակումը կը պղտիկցնէ Պրանսան, հասարակ բրտտոնեայ ժողովուրդները: Ուշացնելով Թիւրքիոյ քայքայումը՝ մենք այդ ժողովուրդներուն քամանակ առած կ'ըլլանք բարձրանալու, կազմակերպուելու ու թերևս իրարու հետ միաբանելու: Արեւելքի մէջ երբ նոր ազգութիւն մը երեւան կուգայ, Եւրոպա անոր քայլերը պէտք է ուզուի. նախ «ստանձնաշնորհումներ», յետոյ ինքնավարութիւն, վերջէն անկախութիւն. բարեշրջումին ընթացքը աս է:

Թիւրքիոյ երկարակեցութեանը նպաստած կ'ըլլանք երբ բարենորոգումներու շնորհիւ երկիրը բնակիչի գարձը նենք քրիստոնեաներուն. ուրեմն Պրանսայի արեւելեան քաղաքականութիւնը ըլլալու է օգնել Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդի մը երբ ան օրինաւոր բարեկարգութիւն կը պահանջէ:

Պրանսայի այս քաղաքականութիւնը կրնա՞ր ներկայ հանգամանքներուն մէջ մեզի ուրիշ պետութիւններու եւ մասնաւորապէս Ռուսիոյ ընդդիմադիր հանդիսացնել:

Ռուսիա որ ինքզինքը կը նկատէ օսմանեան կայսրութեան պիտաւոր ժառանգորդը, անոր նկատմամբ յաջորդաբար երկու տեսակ քաղաքականութեան հետեւած է. աշխարհակալութեան եւ պաշտպանութեան քաղաքականութիւններ: Այժմ Ռուսիա թէեւ չէ հրաժարած Թիւրքիոյ վրայ ունեցած դիտաւորութիւններէն՝ սակայն իր բոլոր ուշադրութիւնը կեդրոնական եւ Եւրոպայի Արեւելքի կողմը դարձուցած ըլլալուն հիմակուհի մտ Թիւրքիոյ բաժանումին ետեւէն չիյնար, ուստի պաշտպանութեան քաղաքականութեան է որ կը հետեւի: Ռուսիա օսմանեան կայսրութեան առժամեայ պաշտպանը ըլլալով՝ չէր կրնար հետեւաբար անհամաձայն գտնուիլ Պրանսայի որ նմանապէս առժամապէս պահպանողն է այդ կայսրութեան:

Գալով միւս պետութիւններուն, Աւստրիա տրամադիր չէ այդ բաժանումին մամբ փութացնելու. Գերմանիան արդէն թրքաւէր եւ պահպանողական է: Երբ Արեւելքի տագնապը սկսաւ՝ Գերմանիա եւ Աւստրիա կ'ըմբռնէին բարեկարգութեան պէտքը որպէս զի պահպանեն Թիւրքիան: Խաղիա որուն փառասենչ ցանկութիւնները քաջ ծանօթ են, չէր կրնար սակայն ո եւ է ձեռնարկ ընել առանց Եւրոպակ-Նիզակահցութեան եւ Անգլիոյ աջակցութեանը:

Կը մնայ Անգլիան: Իրաւ է որ այլ հետ ան իբր էական սկզբունք մը չի համարիր Թիւրքիոյ պահպանութիւնը, բայց ասիէ չի հետեւիր որ անմիջական բաժանումին ցանկացող է եւ մանաւանդ ատոր կը գրգէ: Տարակոյս չի կայ թէ Անգլիա ամբողջ աշխարհին կասկածելի է եւ կրնայ վախճուիլ որ չար խորհուրդ մը յղացած է. սակայն Անգլիա եթէ յանդուգն է, քաղաքական չէ. եւրոպական ընդհանուր պատերազմ մը կրնայ ամենաժանր հետեւանքներ ունենալ պետութեան մը համար որուն ամբողջ հարստութիւնը ծովուն վրայ կը ծփայ եւ որուն օրական աղբիւրն էր կը ցամաքեցնէ միջազգային վաճառականութեան գաղափարը:

Թիւնը ծովուն վրայ կը ծփայ եւ որուն օրական աղբիւրն էր կը ցամաքեցնէ միջազգային վաճառականութեան գաղափարը:

Բայց ենթացքին թէ արդարեւ Անգլիոյ դիտաւորութիւնը եղած ըլլար Արեւելքի խռովութիւններէն եւրոպական պատերազմ ծագեցնել. այս կասկածը պէտք է պատճառ մը ըլլար խռովութիւններուն վախճանը փութացնելու: Եթէ Անգլիա անկեղծ չէր բարենորոգումներու խնդրին մէջ, հարկ էր անոր ընկերանալ, վրան հսկել եւ ի հարկին դապել: Պէտք էր նաեւ սուլթանը միաբան Եւրոպայի մը հանդէպ գնել եւ պետութիւններուն միջեւ ո՛ր եւ է անհամաձայնութեան յայտնի զրկել զինքը: Հարկ էր շուտ գործել, հրգեհը Հայաստանի մէջ շրջափակել եւ հան մարել: Եթէ ամբողջ Արեւելք բռնկէր՝ ան ատեն պետութիւններու տրամադրութիւնները կրնային փոխուիլ. օսմանեան կայսրութեան աւերումը անխուսափելի երեւանալով, անոնք կրնային կոռուի բռնուիլ, կամ բաժանումին համար համաձայնիլ. երկու պարագան ալ Պրանսայի համար երկիւղալի:

Պրանսա ունէր անանկ զիրք մը որ կրնար իրաւախօհի մեծ գեր մը կատարել: Բոլոր պետութիւններուն հետ բարեկամական էին իր յարաբերութիւնները. իր անշահախնդրութեամբ թէ՛ անոնց եւ թէ՛ սուլթանին բոլ մեծապէս ազդեցիկ էր: Իր մասնաւոր շահերն էին խաղաղութեան պահպանումը Արեւմուտքի մէջ, լաւագոյն կացութեան մը հաստատումը Արեւելքի մէջ. այս շահերը Եւրոպայի ալ ընդհանուր շահերն էին: Ամենէն աւելի Պրանսան հեղինակութիւն ունէր եւրոպական միաբանութեան մէջ խօսելու, ինքզինքը մտիկ ընել տալու, եւ կամաց կամաց անոր առաջնորդելու: Գիտաբին գեր արգրել, բայց ոչ անհնարին, ուստի եւ կարելի էր զայն փորձել: Յաջողութեան մէջ փառք կար, իսկ ամէն պարագայի մէջ փորձելը պատիւ կը բերէր: Բայց եթէ այս գերը մենք չստանձնէինք ուրիշ ոչ ոք պիտի կրնար ստանձնել: Եւ երթա՞ք բարով յաջողութեան փառք, փորձելու պատիւ:

Գ.

Հիմա հետեւինք գէպերուն: Սառունի Չարդէն ետքը անգլիական կառավարութիւնը քննութիւն մը բանալու դիտաւորութիւնը իմացուց: Կ. Պարոյ մեր գետպանը սուլթանին խորհուրդ տուաւ Հայաստանի բարեկարգութիւններուն անմիջապէս նախաձեռնութիւնը ունենալ: Նոյն լեզուն գործածեց Ռուսիոյ ղեկավարն ալ: «Ամենքս ալ նոյնը կը մտածենք» կ'ըսէր Աւստրիոյ ղեկավարը: Պ. Քանսպոն կ'ուզէր որ Սառունի գործերուն քննութիւնը օսմանեան կառավարութեան գործը ըլլայ, թէեւ հիւպատոսները ներկայ ալ գտնուին. Եւրոպայի միջամտութենէն խոյս տալ կը ջանար:

Անգլիա ու սուլթանը մենէ խնդրեցին յանձնաժողովին մէջ մասնակցութիւններ հիւպատոսը. կը խորհէին թէ առանց Պրանսայի մասնակցութեանը Արեւելքի մէջ ո՛ր եւ է լուրջ գործ չի կրնար կատարուիլ: Բայց ան ատեն յայտնի եղաւ որ մեր կառավարութիւնը կը միջամտէր ո՛չ թէ իր հաշուին այլ « իբր բարեկամ Ռուսիոյ՝ եւ Անգլիոյ հետ ալ

ամենայն յարաբերութիւններ մշակող:» Լինտոնի մեր գետպանը 95 օգոստոս 13ին խօսելով Լորա Սոլզպերիի հետ կ'ըսէր թէ «Ֆրանսա սիրով պիտի ընդունի ինչ ուղղութիւն որուն հետեւին միւս երկու պետութիւնները:» Այսպէս մենք թող կուտայինք որ առաջին խօսողները աւստրացիներն են: Հետեւանք ան էր որ կա՛մ գերաւ պիտի համաձայնէին, եւ ան առեւն առանց Ֆրանսայի միջամտութեան կարգադրել կը փորձուէին, կա՛մ պիտի չի համաձայնէին, եւ ան առեւն մենք որո՛ւն կողմը սր բռնէինք՝ անոր ստորագրուած պիտի նկատուէինք:

Մեր գետպանը կը մտածէր թէ հարկ չի կար քննութեան վերջանալուն սպասել սուլթանին գործնական բարեկարգութիւններ մտցնելու խրատը աշուտ համար: Երեք գետպանները փետրուարին ձեռնարկեցին բարեկարգութիւններու ծրագրի մը վրայ վիճաբանել. հայկական իւրարանցման ճարտարաբան արդիւնքը համար շատ գործելու հարկը կը տեսնէին: Ապրիլ 18 ին ծրագրը պատրաստ էր, ամբողջ Եւրոպայի հաւանութեանը արժանացած: Սակայն այդ ծրագիրը մայիսի 11 ին ներկայացուցեալ սուլթանին: Ամենքն ալ համաձայն կ'երեւէին արագ ընթացումը հարկին վրայ, եւ սակայն գանդակութիւնները արդէն կը սկսէին: Ինչ որ ամենէն ծանրն է, Ռուսիոյ ցրտութիւնն էր. իշխան Լոպանոֆ բարենորոգումներու գաղափարը ընդունած էր կարծես այն ներքին մտածումով թէ պիտի չի գործադրուին: Անգլիոյ գետպանին ըսաւ թէ «Պետութիւնները ծանր պատասխանատուութիւն կը ստանձնեն եթէ պնդեն բարենորոգումներու գործադրութեան վրայ:» Անտարակոյս իշխանը օմանեան գետպանին ծածուկ չէր պահած ինչ որ Անգլիոյ գետպանին ըսած էր: Իշխան Լոպանոֆ առանց գծաւորութեան կը համակերպէր սուլթանին խնդրած բոլոր յետաձգումներուն: Գործը իր գետպանին ձեռքէն առած էր՝ Բելլարպուրի նաւակը համար. միւս երկու պետութիւններն ալ այս օրինակին հետեւած էին. բանակցութիւնները բնականաբար աւելի զանգաղ կը յառաջանային: Յայտնի էր որ եթէ իշխանը բան մը ընելու երեւոյթը ունէր, այդ բանը զինքը չէր շահագրգռեր: Ո՛ր եւ է հարկադրեցուցիչ միջոցի, մինչեւ իսկ սպառնալիքի գաղափարը կը մերժէր: Ու շարժանքը կ'անցնէին:

Այդ միջոցին ինչ կ'ընէր մեր կառավարութիւնը: Հարկ է ընդունել թէ հաւանած էր իր գետպանին ընթացքին, վասն զի թող կուտար որ գործէր: Հաւանութիւնը տուած էր բարեկարգութիւններու ծրագրին երբ ապահով եղած էր թէ ռուսական կառավարութիւնն ալ հաւանած էր: «Կ ա պ ո յ ա գ ի ր ք»-ը եւ «Դ ե գ ի ն գ ի ր ք»-ը ցոյց կուտան արդէն զանի բրիտանական կառավարութեան հետ համաձայն: Անգլիոյ գետպանին հետ խօսակցութեան մը պահուն մեր արտաքին գործերու նախարարը կարողի աւստրիացիներու կողմնակից կ'երեւնար: Բայց արդէն 1986 յուլիան ենք: Այս պահուս ռուսական կառավարութիւնը ետ քաշուելու որոշում տուած էր: Լոպանոֆ իշխանը կը վախնար ռուսական սահմանազլխին վրայ տեսնել առանձնաշնորհեալ Հայաստան մը որ Ռուսիոյ համար «երկրորդ Պուլիարիս» մը պիտի դառնար. օգոստոս

13ին ինքզինքը բողոքովին հակառակ ցոյց կուտար սուլթանին դէմ՝ եւ է խիստ միջոց գործածելու: Օգոստոս 46ին Լինտոնի ռուսական գործակատարը կ'իմացնէր թէ իր կառավարութիւնը կ'ուզէր Դրան թողուլ ձեռք առնելը միջոցներուն պատասխանատուութիւնը: Թիւրքիա արդէն այնքան ապահով էր Ռուսիոյ աջակցութեանը վրայ որ իր Լինտոնի գետպանը կը սպասնար լորա Սոլզպերիին «բազաբական փոփոխութիւն մը որ Թիւրքիան բողոքովին Ռուսիոյ ձեռքերուն մէջ պիտի դնէր:» Երկրորդի բանակցութիւնները կը շարունակուէին, եւ գետպաններուն ու կառավարութիւններուն միջեւ հեռագրեալ աւելի խառնաշփոթ առաջարկներ կը փոխանակուէին:

Ֆրանսա հետեւած էր Ռուսիոյ շարժումին ու այլ եւս չէր պնդեր «կորովի անօրինութիւններու» վրայ: Հակառակ Պ. Քանպոնի եւ Պ. Նէլիտոֆի կարծիքներուն, Ֆրանսայի եւ Ռուսիոյ կառավարութիւնները՝ բաւական համարելով Դրան երկրորդի պատասխանները՝ յայտարարած էին թէ յանուն իրենց ներկայացուած ծրագրի վրայ եւս զիրենք չէր շահագրգռեր: Այսպէս ընդունել թէ Դուռը կրնար պետութիւններուն առաջարկած միջոցներուն տեղը իր խաբէական միջոցները դնել, ուրիշ բան չէր բայց եթէ Պուլոյ մէջ տկարացնել պետութիւններուն հեղինակութիւնը, երեւան բերել անհամաձայնութիւնը, եւ ցոյց աւելցնել թէ ուղածին պէս կրնայ շարժիլ: Վերջապէս խռովութիւնները երկարատեւել էր, եւ անոնց ծանրացումովը աշխարհի խաղաղութիւնը վտանգել:

Թէ ինչո՞ւ մեր կառավարութիւնը յուլիան սկսեալ թէ լեզուն եւ թէ՛ ընթացքը փոխեց, «Դեղին գիրք»-ը այս մասին ո՛ր եւ է բան մը չըսեր: Նմանապէս բան մը չըսեր 1895 օգոստոսին Քոնթրէքտէլի Պ. Հանսթոյի եւ իշխան Լոպանոֆի անսակցութիւններուն վրայ: Առաջ կամ ետքը վիճեցին երկու կառավարութիւնները: Այդ 1895 յուլիան եւ օգոստոս ամիսներուն ֆրանսական հին աւանդութիւն մը լքուեցաւ: Գոնէ այդ աւանդութիւնը պաշտպանուեցաւ: Չենք գիտեր, բայց չենք կարծեր. վասն զի անկարելի կը թուի որ մեր նկատումները լսելի չըլլային եթէ մենք զանոնք ըսած ըլլայինք:

Չենք գիտեր Քոնթրէքտէլի անցած գարձածը: Բայց աներեւակայելի է որ եթէ Ֆրանսայի բազաբական հարկադրութիւնները բացատրուած ըլլային իշխան Լոպանոֆի, անիկա նկատողութեան շանկը զանոնք, բայց որ առանց մեծ զոհողութեան մը կրնար ընել: Հետեւաբար հարկ է նկատել թէ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը կա՛մ կարեւորութիւն չընծայեց Արեւելքի մեր հայրենական ժողովուրդները, կամ կարծեց թէ այդ ժողովուրդները ո՛ր եւ է վտանգի չենթարկուիր, թէ հայկական խնդիրը կարեւորութիւն չունէր, եւ թէ ինք անձարակութիւն մը ըրած կ'ըլլայ զուր տեղը շահերու անհամաձայնութիւն մը ցոյց աւելու երկու երկիրներուն միջեւ ա՛յն պահուն երբ իշխանը Չարին այցելութիւնը կը խոստանար մեզի:

Եւ արդարեւ երկու նախարարներն ալ համաձայն էին «խռովութիւնները» անյիշական զրգուովին վերագրելու. համաձայն էին կատարածներու մէջ, նոյն իսկ քննիչ յանձ-

նաժողովին տեղեկագրէն յետոյ, ուրիշ բան չտեսնելու բայց եթէ անխուսափելի եղելութիւններ, սովորական, աւանդական իրողութիւններ որոնց համար ոչ սք կրնայ բան մը ընել: Երկուքն ալ կոտորածները որակելու համար միեւնոյն բացատրութիւնները կը գործածեն. «միջազէպ», «դիպուած», որոնց համար կ'երեւայ թէ երկու մարքերն ալ չեն խոսովիր զգայութեան յուզումներով: Երկուքն ալ կարծած են եւ ըսած թէ խոսովութիւնները ինքնիրեննին եւ շատ շուտ պիտի վերջանան: Ֆրանսայի այն թերթերը որոնք նախարարին բերանն են հոչակեցին թէ ֆրանսական նախարարը իր պաշտօնակցին մտքին վրայ ազդեցութիւն ձեռք բերած է: Ենթադրութիւններ են աւստր. չենք գիտեր թէ ո՞վ զո՞վ վարեց: Իրողութիւնները ցոյց պիտի տան թէ անոնք մեզի ո՛ւր վարեցին:

ԱՎԿԻՍ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսիա, որ իր Կ. Պոլսոյ գեսպանին՝ Պ. Չինովիէվի միջոցաւ սուլթանին մօտ այնքան ուժով կը սնուէր՝ Յուստատանի Երկիրս իշխանը Կրէտէի ընդհանուր կառավարիչ ընդունել տալու համար, Ռուսիա, սուլթանին նոյնքան ուժով մերժման վրայ, ետ առաւ իր պահանջումը:

Ահա վերջին կիսամակն էն կարեւոր գէպը եւրոպական քաղաքականութեան մէջ:

Սուլթանը յիշատակագիր մը ղրկելով Պ. Չինովիէվի յայտարարեց որ չի կրնար ընդունիլ Ռուսիոյ առաջարկը, որովհետեւ ազգին կամքին դէմ է ան ուղղակի եւ Կրետէն Յունաստանի միացնելու թերասքող միջոց մը: Ալ աւելի, ազգային զգացումին եւ Թիւրքիոյ հեղինակութեան այնքան հակառակ է այդ առաջարկը որ սուլթանը, նոյն իսկ, իր նախարարներու խորհրդին չի կրնար ենթարկել զայն:

Ասոր վրայ, Կ. Պոլսոյ ռուսական գեսպանատան առաջին թարգման Պ. Մաքսիմովի Երլարզի պալատը գնաց (յունուար 28 ին) ու յայտարարեց որ ձորը չի կրնար սուլթանին յիշատակագիրը իբր պատասխան ընդունիլ իր առաջարկութեան:

Սուլթանը, ի պատասխանի, յայտարարեց որ անկարելի է որ տեղի տայ այս կէտին վրայ:

Կացութիւնը աս էր: Ռուսիա իրեն հետ ունէր Ֆրանսան ու Անգլիան, ու, լուեղայն, Իտալիան, իսկ սուլթանը՝ Գերմանիան ու Աւստրիան: Քաղաքական աշխարհը հետաքրքրութեամբ, եթէ ոչ անձկութեամբ, կը սպասէր ձորին ու սուլթանին միջեւ ծագած այս գծութեան ելքին: Մէյ մըն յանկարծ փետրուար 8 ի թերթերը հրատարակեցին թէ... ձարն է որ տեղի կուտայ. Պ. Չինովիէվ հրահանգ ստացեր էր ա՛լ չմտնելու Երկիրս իշխանին ընտրելութեան վրայ: Փետրուար 9ի ռուս պաշտօնական օրագիրը հետեւեալ կարեւոր յայտարարութիւնը կը բովանդակէր.

«Ռուսիա, կրետէի ինչորիս արդի կացութեան վրայ

իր գիտատրութիւնները անկեղծօրէն պարզած ըլլալով սուլթանին եւ մեծ պետութեանց, չի սնուէր իր առաջարկած կարգադրութեան վրայ, եթէ եւրոպական ուրիշ պետութիւն մը կարենայ արդի կնճոռս կացութեան ելք մը պահել որ հաւասարապէս գոհացնէ սուլթանին, պետութեանց ու կրետացիներուն պահանջումները եւ ապապայ խորիսի մը հայթայթէ՝ կրետական ինչորիս վերջնական կարգադրութեանը համար: Այսպիսի առաջարկ մը անկասկած պիտի ընդունի ռուս կառավարութեան հաւանութիւնը:

«Այսպիսի կնճոռս ձեռնարկի մը լուծումը գծուարին է սակայն, հետեւաբար Ռուսիա նոր առաջարկութեանց նախաձեռնութիւնը չի ստանձներ: Ռուսիա, Թիւրքիոյ հետ լաւագոյն յարաբերութիւնները շարունակելով հանդերձ, եւ մեծ պետութիւնները իր առաջարկութեան հաւանած չըլլալով, զեկուցած է պետութեանց թէ ո եւ է պատասխանատուութիւն կը մերժէ կրետական ինչորիս ձգձգումէն յառաջ գալիք հետեւանքներուն մասին, թէ չպիտի ընդունի ընդհանուր կառավարչի մը բռնի հաստատումը՝ ո եւ է կերպով, կամ թիւրք զօրքերու յաւելումը կղզիին մէջ, եւ թէ ո եւ է պարագայի մէջ չպիտի մասնակցի ո եւ է ճընշողական միջոցի ընդդէմ կրետացիներուն, որոնք արդէն պէտք եղածին չափ երկար առեւ համբերութեամբ սպասեցին իրենց ճակատագրին վերջնական կարգադրութեանը:»

Չարը կը մտածէ՞ արդեօք թէ արեւելեան ինչորիս սկսած առեւնը Թիւրքիոյ այնքան ակար զիրքը ինքն կը որ ուժովցուց՝ իր պաշտպանողական քաղաքականութեամբ, այնքան որ սուլթանը, ուժովցած ու յանդգնացած, այսօր ձարին դէմ կը գործածէ անկից առած ուժը: Պահ, դիւանագիտութեան մէջ օրական պարտութիւնները նշանակութիւն չունին: Այն մշտնջենական սատրանճին մէջ զոր մեծ պետութիւնները իրարու մէջ կը խաղան, մէկ քարի կորուստով կամ շահով չէ որ կարելի է գաղափար մը կազմել խաղին ելքին վրայ: Միայն թէ, այս անգամ ալ, ինչպէս միշտ այն օրէն ի վեր ուր Ռուսիա արեւելեան ինչորիս իր ընթացքին թողուց, Գերմանիան է որ վճարական քարերը առաջ կը քշէ:

Պ. Նէլիտովի կը յայտնէր իշխան Լուպանովի թէ տանձը հասունցած է, ա՛լ ժամանակ է քաղելու:— Չոյնք որ այնքան հասունաց որ զետիւնը իյնայ: — Այո՛, կը պատասխանէր Նէլիտովի, բայց եթէ զետիւնը իյնալուն սպասենք, ուրիշներ պիտի ելլեն որ պիտի ուզեն մեզի հետ բաժնել զայն:

Գրեթէ այն միջոցին ուր Ռուսիա կը հարկադրուէր ետ առնելու Երկիրս իշխանին ընտրելութիւնը, անպին Գերմանիոյ արտաքին գործերու նախարարը, Պ. ֆոն Պիւլլով, կը յայտարարէր խորհրդարանին մէջ.

«Անշուշտ անհնար է որ քոստէրի մը (նուագախումբ) մէջ, նոյն իսկ Եւրոպական Քոստէրի մը (միաբանութիւն) մէջ ամէն մարդ միեւնոյն գործիքը չալէ: (Ծիծաղ:) Մէկը թմբուկը կը զարնէ, միւսը փողը, եւ որ ի կարգին: Մենք՝ դիւանագիտական միջամտութեան ու խորհրդատուութեան սրինգը կը զարնենք կոր Կ. Պոլս, ե ի գուր չենք զարներ կոր: (Կոկորդալիւր ծիծաղ:) Գրան վրայ ճնշում բանեցնելու ո եւ է գործի չի պիտի սանսակցինք:

(Չերմ ծախահարութիւն:) Չենք կրնար այդպէս ընել, որովհետեւ այդպիսի ձեռնարկի մը հետեւանքները կրնան անհաշուելի ըլլալ, եւ որովհետեւ ամէն կարգի անակնկալներ կրնան առաջ գալ ասկից թիւրքիա կամ այլուր:

«Աշխարհիս էն բարի կամեցողութեամբը, չեմ կրնար ըսել թէ ի՞նչ պիտի ըլլայ Կրեաէի վիճակը: Որոշումը դից ձեռքն է: Բայց կրնամ ըսել թէ Գերմանիա թող չի պիտի տայ որ քուսի տարուի կրետական խնդրէն յառաջ գալիք կնճոտութեանց մէջ, եւ թէ հոգ պիտի տանինք որ կրետական կոհակներուն խուժումը չի գայ թաւալի գերման ատիւնքներու վրայ:

«Եթէ Դուրը միւս պետութեանց հետ համաձայնէր այս ընտրելիին մասին, մենք չէ չի պիտի ըսէինք: Բայց Դրան վրայ ո եւ է ճշուտի չի պիտի մասնակցինք: Եթէ գծութիւն ծագի, սրինգնիս սեղանին վրայ պիտի գնենք ու քոնսլէքն դուրս ելլենք: (Կոկորդալի ծիծաղ:) Ասիկա կը համապատասխանէ մեր խաղաղասիրութեան եւ Արեւելեան գործերուն ու Միջերկրականի մէջ ո եւ է շահ չունենալնու:

«Ասով, Ռուսիոյ հակառակ դիրք չենք բռներ, որուն հետ կապուած ենք ոչ միայն վաղեմի ու յարգելի աւանգութիւններով, հապա բազում կարեւոր շահերով, եւ որուն հետ ո եւ է լուրջ անհամաձայնութիւն չունինք ո եւ է տեղ: Մենք կը խուսափինք գծաութենէ Ռուսիոյ կամ Ֆրանսայի կամ Անգլիոյ կամ ուրիշ ո եւ է Պետութեան հետ: Միայն թէ ո եւ է երաշխաւորութիւն չենք ստանձնիր այնպիսի սրտումներու համար զորոնք վստանաւոր կը համարինք:»

Բացորոշ է ասիկա: Այսչափ մեկին ալ չըլլար, հոգ չէր, Սուլթանը շատ լաւ հասկցած է ի՞նչ կը թելադրուի իրեն: Խեղճ Կրետացիներ:

* * *

Ահաւասիկ հարց-պատասխանի մը սր փետրուար 14 ին տեղի սենեցաւ Անգլիոյ խորհրդարանին մէջ, վիճակագիրներուն կը թողունք հաշուել քանի՛ հարող անգամը ըլլալով:

Պ. ՍԹԻՎԼԷՆՍԸՆ, ազատական երեսփոխան. — Թաւալուհին 1897 յունուարի գահաճառը կը հաստատէր թէ Կ. Պոլիս եւ թիւրքիոյ միւս անդերը կատարուած ահաւոր ջարդերը՝ Բարիզի Դաշնագիրը ստորագրող Պետութեանց մասնաւոր ուշադրութիւնը գրաւած էին. թէ խորհրդարանին առջիւ պիտի դրուին պաշտօնագրեր (կապոյտ Գիրք) ցոյց տալոյ այն նկատուածութիւնները որոնք Պետութիւնները մղած էին Օսմանեան Կայսրութեան արդի կացութիւնը մասնաւոր խորհրդակցութեան առարկայ ընել տալու իրենց Կ. Պոլսոյ ղեկավարներուն. եւ թէ խորհրդակցութիւնները, զորոնք վեց ղեկավարները յայնժամ հրահանգ ստացած էին կատարելու, կը շարունակուէին տակաւին: Արդ, ի՞նչ եղաւ այդ խորհրդակցութեանց շարունակութիւնը եւ կարելի է յայտարարութիւն մը ընել անոնց արդիւնքին նկատմամբ, եւ եթէ գաղթած են, գործին մէջ զլիսաւորապէս շահ ունեցող Պետութիւնները դիտաւորութիւն ունին զանոնք վերսկսելու:

Պ. ԳԸՐՁԸՆ, խորհրդական Արտաքին գործերու նախարարութեան. — Կ. Պոլսոյ ղեկավարներուն խորհրդակցութիւնները 1896 ղեկտեմբերին սկսան եւ շարունակեցին մինչեւ 1896 փետրուար, երբ խորհրդակցութեանց արդիւնքը, որոնք գաղանի էին, պետութեանց հաղորդուեցաւ: Այդ թուականին կրետական եւ յետոյ յունական խնդիրը սուր կերպարանք առաւ, եւ ղեկավարները միաձայն որոշեցին որ այդպիսի ժամանակ մը անօգուտ պիտի ըլլար բարենորոգումներ առաջարկել: Չեմ կրնար ըսել թէ Պետութեանց ապագայ սրտումը ի՞նչ պիտի ըլլայ:

Սպանալիք մըն է ասիկա, հարցումը ընողին զխոսն վրայէն ուղղուած սուլթանին, որ սակայն խորհրդարանական սպանալիքներէ չվախնալը շատոնց հաշակեց, կամ թէ հաստատութիւն մը Անգլիոյ կառավարութեան երկու կարեւորագոյն անդամներուն՝ Պ. Չամպլէնի ու Պ. Պալֆուրի վերջերս իրենց առնաբանութեանց մէջ ղգայնել արւած այն թելադրութեանը թէ Անգլիա ալ յոգնած է Եւրոպական Միաբանութիւն կոչուած ապիկար, ծիծաղելի ու ամուլ ընկերութեանէն եւ թէ կրնայ ըլլալ որ մէկի բաշուի՝ ազատօրէն գործելու համար: Չենք գիտեր: Սպաններ միայն:

Անգլիոյ խորհրդարանին մէջ նոյն օրը ուրիշ հարց-պատասխանի մըն ալ տեղի ունեցաւ, մեզի համար շատ կարեւոր.

Պ. Ճ. ԼՕՈՒՏՀԸՐ, պահպանողական, հարցուց թէ ղեկավարները իրենց քննութեանց մէջ ղբաղեցան նաեւ Կ. Պոլիս ումբեր նետող Հայերուն արարքներով:

Պ. ԳԸՐՁԸՆ. Որչափ կը յիշեմ, ատիկա քննութեան առարկայ եղած ըլլալու չէ, որովհետեւ խորհրդակցութեան անմիջական առարկան թիւրք վարչութեան բարենորոգումն էր:


Պ. Գրորըն կրնար պատասխանել պահպանողական երեսփոխանին թէ արեան հեղեղներէն ու վախներուն կայտերէն ետքը չէր սր ղեկավարները քննութիւն պիտի բանային Հայերուն պատասխանատուութիւնը փնտռելու համար: Մարդկութեան էն ահաւոր սճիրներէն մին թոյլաւորելու ամօթը կը բաւէր իրենց: Իրենքզիրենք անարդօրէն ծիծաղելի ալ ընել չի պիտի աշխատէին անշուշտ՝ ղոհներուն արիւնտս ղեկերուն ղեմ ամբաստանագիրներ շարադրելով:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՏԵՒ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնիչին ղրկել առ

L FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեղինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար:

Կը հրատարակուի ամսու 1 ին եւ 15 ին: Արեւելքի համար (Պուլկարիա, Ռումանիա, Յուստան եւայլն) կը խնդրուի ոսկի ֆրանքով հաշուել բաժնեղինը: